

Ե՛Վ ՋՈՐ, Ե՛Վ ՋՈՐԱՐԱՐ Չայր եւ թուրքը

Թուրքը, համաշխարհային պատերազմի օրերին, իր տկարութեան սարսափից խթանուած՝ յղացաւ ծրագիրներից ամենադիւայինը՝ բնաջնջել մի հինաւուրց ցեղ, որ դարերով լոյս եւ քրտինք էր սփռել իր շուրջը: Յղացաւ ու գործադրեց:

Եւ մի օր, թրքահայութեան ողջակիզումի առաջին օրը, ծագող արեւը Չայաստան երկրի փոխարէն տեսաւ մի կատարեալ գեղէն:

Տեսաւ խաչի նսեմ ստուերն ընկած մեր հազարամեայ հայրենիքի վրայ: Տեսաւ, թէ ինչպէ՛ս մի խաւարասէր ազգ - վախկոտ, բայց յարձակողական, փոքրոգի եւ աւերիչ - կը հրոսէր մի անզէն ու անպաշտպան ժողովրդի դէմ՝ զայն իր պատմական հայրենիքից արմատախլելու խելագարութեամբ: Տեսաւ, թէ ինչպէ՛ս կը մոխրանային հազարամեայ օրհնութեամբ լեցուն գիւղերը մեր, կը պղծուէին եկեղեցիները, վանքերը, գրադարանները հազար: Տեսաւ խուժդուժ գործը տապարի, եաթաղանի կապարի - ամէն տեսակի եւ չափի գործիքների, որոնցմով սպանել ու աւերել կարելի է: Այլեւս Չայաստանով անցնող գետերը արիւն էին կտրել, իսկ կիրճերը՝ դիակնաստան: Տեսաւ, թէ ինչպէ՛ս իրենց ամուսինների եւ ծնողների ներկայութեան կը խլուէին ու կը բռնաբարուէին կանայք:

Գործի վրայ տեսաւ թրքական սանձարձակ շնութիւնը, որ անասուններին իսկ կը գերազանցէ: Տեսաւ սարսափից խելագար մեր աղջիկները, որոնք Եփրատի ալիքները կը գրկէին: Տեսաւ, թէ ինչպէ՛ս հայրը հաւաքեց ընտանիքն իր յարկի տակ եւ այրեց ողջ. թէ ինչպէ՛ս սովահար հայ մանուկները իրենց մորթուած մայրերի դիակներին կպած՝ ծիծ կը ծծէին:

Արեւը տեսաւ տուն, տանիք, ճամբաներ՝ արիւնով ներկուած: Տեսաւ բարձունքների վրայ, գետափներին եւ ձորերի մէջ մահուան հետ կռուի մտած արնաթաթախ հայորդիներ: Տեսաւ, թէ ինչպէ՛ս «շներն ու շնագայլերը մեր սիրելիների սրտերը կը կրծէին»: Տեսաւ իրենց գողգոթայի ճամբին անասունների պէս վաճառքի հանուած հայ կիներ ու մանուկներ, եւ լուսաւորեց խաչի ճամբան ծերերի, կաղերի, կոյրերի: Տեսա՛ւ, հայոց արեւը տեսա՛ւ այդ ամէնը, եւ խաւարեց այդ օրը:

Մի օր էլ, երբ ամէն ինչ տխրօրէն կատարեալ էր, բնութիւնը նստաւ սգալու Չայոց Աշխարհի մոխրակոյտերի վրայ...

Եւ թուրքը, եղեռնից յետոյ, սովորական շնականութեամբ ասաց եւրոպացուն. «Ձարդէն վերջը աղօթք մը ըրի եւ արդարացայ»:

Իսկ դիւանագիտական խարդաւանքների վարպետ Մոսկուան, յանձին Ռադեկի, եկաւ արդարացնելու Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը. «Իթթիհատը, իր երկրին անկախութիւնը պահելու համար, ըրաւ ինչ որ կրնար: Ան վճռեց ոչնչացնել ամբողջ հայ ժողովուրդը: Եւ կասկածէ դուրս է, որ Պոլսոյ մէջ նստած իթթիհատական ղեկավարները այս հարցին մէջ շարժեցան պետական անհրաժեշտութեան գաղափարով: Թուրքերի համար խնդիրը շատ սուր էր դրուած - ապրել կամ մեռնել: Անոնք նախընտրեցին ապրել»:

Այսպէս խօսեց կարմիր հրէշը՝ սեղմելով Թուրքիոյ արնոտ թաթը:

Քրիստոնեայ աշխարհին էլ լրբութիւն ունեցաւ, որպէս կարեկցանքի արտայայտութիւն, մեզ նետելու մի երկբառ նախադասութիւն՝ «մարտիրոս ժողովուրդ»:

Իսկ հա՞յը - նա տեսաւ ու զգաց հայաքանդ եղեռնի ահաւորութիւնը միայն:

Մարդկութեան հետ, սակայն, նա էլ դեռ չի չափել վեհութիւնը այն աստուածային շարժումների, մեծութիւնը մարդկային ցեղի պատմութեան մէջ նախընթաց չունեցող այն գերմարդկային արարքի, որով մեր ժողովուրդն իր կէսը ողջակիզեց՝ ցեղի հոգին, արիւնը փրկելու համար:

Պատմութեան ծանօթ որոշ ժողովուրդներին յատուկ տկարութեամբ - ցեղուրացութեամբ - հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիքականը, բայց բիւրիցս փա՛ռք իրեն, նա չունեցաւ այդ տկարութիւնը:

Գիտակցօրէն, շատ տեղերում, թէկուզ կրաւորական հերոսացումով, նա զոհեց կէսն իր մարմինէն՝ իր ցեղային էութեան դէմ չմեղանչելու համար:

Նա դարձաւ իր սեփական Ձոհը եւ Ձոհարարը միաժամանակ:

Եւ փրկուեց ցեղը:

* * *

Սպասելի էր, որ այդ օրէն ողջ հայութիւնը փարի ցեղին, թիկունք դարձնելով ժողովուրդները հոգեւորապէս բուշելիկացնող ստաղենկրատիզմին, լիբերալիզմին, սոցիալիզմին եւ գաղափարախօսական այլ կարգի հնոտի եւ սնոտի մոլորանքներին:

Յէնց այդ օրէն հայութեան որոշ տարրերը ցեղն ընդունեցին իբրեւ միակ ապաւէն եւ սրբութիւն - դարձան ցեղակրօն:

Հայութեան որոշ մասը, սակայն - հակառակ որ թուրքը մեզ հարուածեց իբրեւ ցեղի, հայութիւնը իրեն վիճակուած անօրինակ եղեռնի ու տառապանքի մէջ առաքինացաւ իբրեւ ցեղ - մեր ժողովրդի որոշ մասը շարունակում է մնալ անցեղահաղորդ՝ գերին «Եւրոպական» կապկութեանց:

Այդ որքան տխուր, այնքան ամօթալի իրողութիւնը պիտի բացատրել այն բանով, որ այդ տարրը իբրեւ հայ չապրեց իր հայրենիքին եւ ազգին վիճակուած անմարդկային ողբերգութիւնը, եւ մնաց իբրեւ ազգային մեր տկարութիւնը սնուցանող չարիք:

Ապրիլեան եղեռնէն յետոյ հայօրէն խորթ եւ պակասաւոր պիտի համարել անցեղակրօն հայը:

Օրուայ մեր ամօթանքը եւ թուրքի շահը պիտի համարել հէնց այդ հայօրէն պակասաւոր, այդ անցեղակրօն տարրերի գոյութիւնը:

Գարեգին Նժդեհ

«Ռազմիկ», Սոֆիա, 1941թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԻ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ **Մոնղոլական եղեռնաբաղձություն**

Մոնղոլական ցեղի ցայտուն հոգեգծերից են սեռակենտրոնությունը եւ եղեռնաբաղձությունը: Առաջինով մոնղոլատիպ էակն ուրուագծում է իր բաղձանքները, երկրորդը՝ ծառայեցնում է որպես նպատակահասութեան միջոց: Սեռակենտրոնությունը թէ եղեռնաբաղձությունը հետեւանք են ներքին անզօրութեան զգացումի: Արիատիպ մարդը նպատակին ձգտում է ոգեկան ոյժերի լարումով, մոնղոլատիպը՝ ոճիրով: Առաջինն ողբերգական խորք ունի, երկրորդը՝ անխտրողական է կարճագոյն ելքին ծառայող միջոցների խնդրում: Նա մտածում է նաեւ իրերի վախճանաբանութեան մասին, սա տեսնում է միայն իրերը, ուստի՝ ամենավերացական համարուած իր յղացումներն իսկ հազիւ են հասնում անբնազանցական մի ճակատագրապաշտութեան սահմանին: Իրականում անհաւատ՝ մոնղոլն ամենավարպետ կերպով կեղծում է մոլեռանդութիւն: Վերացական ամէն բանի երեւութական արժէք է տալիս, երբ դրանից գործնական շահ ունի: Սիրում է հաճոյքը, բայց չունի ուրախ հոգի: Անընդունակ է արժէքներ ստեղծել, բայց ունի զգայական վայելքի մոլուցք: Մշակոյթը, արուեստը չի ստեղծում, բայց համեմատաբար շուտ է իրացնում նիւթական քաղաքակրթութիւնը եւ սրա յարմարութիւններից օգտուելու ձեւերը: Մեծագլխութիւնը եւ կարճոտութիւնը նրան դարձնում են ծոյլ եւ մակաբոյժ: Ձին չի հեծնում ասպետական գործեր կատարելու խանդով, այլ՝ իր մարմինը փոխադրելու պահանջից: Ձիու վրայ աւելի քնանում է, քան թէ երազում: Ժանտազգացօրէն նեղսիրտ է եւ իր ամենազօրաւոր զգացումն է ատելութիւնը:

Իր ոյժերը ծնունդ են իր ներքին տկարութեան: Անչափելիօրէն վախկոտ է, բայց եւ անհունօրէն անզուր: Մի վայրկեանում դա աւելի է ստրկանում, քան թէ արիատիպ մարդը՝ տարիների, սերունդների ընթացքին: Որպէս ներքին սարսափի էակ՝ դա աշխարհում իրան պարտադրում է սարսափով: Ներքին սարսափի զգացումը, միացած ծուլութեան, նրան դարձնում են ամենադաժան մակաբոյժը: Մոնղոլն է միայն ընդունակ ստեղծելու «ենիչերիական» դրութիւն: Դրա քաջութիւնը բղխում է նենգութիւնից, քաղաքական իրապաշտութիւնը՝

հաւատարմութեան զգացումի կատարեալ բացակայութիւնից: Դա զուրկ է պատմական ապրումից, բայց սքանչելիօրէն գիտի օգտուել վայրկեանից: Դա ո՛չ տեսնում է հեռաւորը, ո՛չ էլ մտածում նրա մասին, բայց որպէս չոր ներկայապաշտ՝ յաջողում է անցաւոր արդիւնքներով իրան ապահովել անստոյգ մի ապագայ: Դա խորշում է վերացականից, զուրկ է յաւիտենականութեան զգացումից, յաւիտենատենչութիւնից, անընդունակ է անցաւորում արժէքներ տեսնել եւ սարսափում է ապագայից, ուստի՝ ո՛չ կարողանում է դիւցազներգութիւն ստեղծել, ո՛չ էլ՝ ճշմարիտ բանաստեղծութիւն: Հաւաքաբար դա կատարում է քաջութեան գործեր, բայց ծնունդ չի տալիս հերոսների, այսինքն՝ նպատակի մարդկանց: Հերոսը, սուլթանը նրա համար այնքան հմայք ունեն, որքան դեռ մարմնապէս ապրում են: Կարճայուշ է, ուստի եւ՝ ապերախտ: Դա հասկացողութիւն չունի ոգու պաշտամունքի մասին եւ շուտ է մոռանում իր հորը, իսկ պապերով չի՛ էլ հետաքրքրում (հայրութեան զգացումի չգոյութիւնն էր, որ մղեց նրան «թրքութեան հայր» յայտարարել Քէմալին՝ դեռ նրա կենդանութեանը): Դա անփոյթ է նաեւ դէպի իր զաւակների ապագան: Այդ բոլորով հանդերձ, անձնական «ես»-ի զգացումն էլ աղօտ է իր մէջ: Նրա ընտանեկան, ընկերային թէ կրօնական ամբողջ կեանքը դառնում է սեռային յոյզերի շուրջ: Նրան մահմեդական է դարձրել ո՛չ թէ Ղուրանի իմաստութիւնը, շքեղ ոճը, այլ՝ նրա զգայական խոստումը՝ դրախտային կանանց մասին: Սեռակենտրոնութեան հետ՝ բնութիւնը նրան տուել է ե՛ւ ժամտատեսիլ կերպարան: Տեղային երկու այս յատկանիշների պատճառով, նրա մէջ միացած են պղծումի եւ եղեռնագործումի բաղձանքները:

Արիատիպ մարդը բնազդական գարշանք ունի դէպի միւս ցեղերը, որովհետեւ նրա մէջ ազդու է ներքին զգացումը՝ սեփական արեան ազնութեան մասին: Մոնղոլն իրանից դուրս է տեսնում գեղեցկութիւնը, ազնութիւնը, ուստի՝ ունի արիւնախառնումի անյաղթահարելի մղում: Այդ անյաղթահարելիութիւնը, հանդիպելով մասնաւորապէս սպիտակ ցեղի գարշողական վանումին, մոնղոլի մէջ յարուցում է նախանձի մղձաւանջ, որ բաւարարութիւն է ստանում պղծումով կամ ոչնչացումով: Ահա՛ թէ ինչո՛ւ մոնղոլական ցեղի վարած բոլոր կռիւների շարժառիթներն եղել են սեռային եւ հետեւանքները՝ ոճրախառն պղծագործումներ: Ահա թէ ինչո՛ւ այդ ցեղի բոլոր ներկայացուցիչների մէջ անեղծանելի բնազդների ոյժով գործում են նենգամտութիւնը, ճարպկօրէն կեղծելու անմրցելի ընդունակութիւնը, պղծաբաղձութիւնը,

եղեռնաբաղձութիւնը, կողոպուտի, ոչնչացումի տենդը, եւ այդ բոլորի հետ՝ դաժան սրամտութիւնը, սադիստական հեգնանքը:

Կողոպուտի տենչը, սեռային ցանկութիւնը, պղծաբաղձութիւնն ու եղեռնաբաղձութիւնն են եղել մոնղոլական բոլոր աշխարհակալներին եւ հորդաներին առաջնորդող ոյժը: Այդ ոյժն է վարել անգամ թուրքական երկու ամենաերեւելի աշխարհակալներին՝ սուլթաններ Մեհմեդ Բ.-ին եւ Սուլէյման Ա.-ին, որոնք ստեղծել են օսմ. պետութեան փառքը եւ պատմութեան մէջ էլ ճանաչուում են որպէս զօրաւոր եւ լուսամիտ անձնաւորութիւններ (Մեհմեդ Բ. Ֆաթիհը ցուցահանում էր անգամ գրական հակումներ եւ շատ եւրոպացիներ նրան ընդունում են որպէս Վերածննդի դարաշրջանի մի դէմք): Բիւզանդիոնի պարիսպների առջեւ (28 մայիս, 1453) սուլթան Մեհմեդ Բ.-ն ճառ է խօսում, իր բանակին խոստանալով գրաւելի քաղաքի կիները, աղջիկները եւ գեղեցիկ պատանիները: Կ. Պոլսի գրաւման օրն այդպէս էլ եղաւ: Անխտիր պղծուեցին կանայք, կոյսեր, պատանիներ եւ մանուկներ՝ երկու սեռից: Անասելի այդ խայտառակութիւններին անձամբ մասնակցեց ինքը՝ «Վերածննդի դարաշրջանի» սուլթանը: Նա ոչնչացնել տուեց գերի մնացած յոյն հրամանատար Նոթարասն ու սրա ամբողջ ընտանիքը, որովհետեւ նա զլացել էր 14-ամեայ գեղանի իր տղան յանձնել սուլթանի կրքերին: Սուլէյման Ա.-ի ժամանակ, երբ Զոռոսում պաշարուած քրիստոնէաները, դիւցազնաբար դիմադրելով, ի դերեւ էին հանում թուրքական ներխուժումի բոլոր փորձերը (1522) սուլթանն իր բանակը խանդավառելու միջոց ընտրեց հետեւեալը - ամբողջ 12 ժամ անընդհատ նա մուկներին կանչել տուեց. «Վաղը յարձակում. հողն ու քարը՝ Փաղիշահին, բնակիչների արիւնն ու ինչքը՝ յաղթողներին»: Արեան եւ կողոպուտի տենչը հետեւեալ օրը 12 հազար թուրքերի դիակներ թափեց Զոռոսի ափերին, բայց ողջ մնացողները շարունակեցին յարձակումները (տալով 60 հազարի չափ զոհեր), որովհետեւ մոնղոլը կանգ առնել չգիտի միայն մի բանի առաջ - կողոպուտի, եղեռնագործումի հեռապատկերի:

Ի՞նչն է փոխուել այդ օրերից. փոխուել է մասամբ թուրք ազգի արիւնը: Նա ձուլել է փոքր-ասիական բազմաթիւ փոքր ժողովուրդներ: Օսմանեան կայսրութեան պատմութեամբ եւ թուրք ազգի ցեղային բաղկացութեամբ զբաղուող բազմաթիւ հեղինակաւոր պատմաբաններ, ցեղաբաններ միաբերան վկայում են, որ դա ամենախառնարիւն ժողովուրդն է:

Այստեղ ծագում է ցեղաբանական-հոգեգիտական շատ կարելոր մի հարց: Կենսաբանությունը, հոգեբանությունը, ժառանգաբանությունը դեռևս լրիւ կերպով չեն բացատրել այն հարցը, թէ ինչո՞ւ արենախառնումի դեպքում տիրապետող են մնում մարմնական թէ հոգեւոր ստորին յատկանիշները, այսինքն՝ ինչո՞ւ, օրինակ, սպիտակ ցեղի եւ դեղինի կամ սեւի խառնուրդից առաջացած սերունդը մարմնական յատկանիշներով, մանաւանդ հոգեգծութեամբ աւելի դեղին է, սեւ, քան թէ սպիտակ: Շատերն են պրոֆ. Շըվիլի նման հարցնում. «Կարո՞ղ է պատահել, արդեօք, որ մի ժողովրդի նկարագիրն որոշելու խնդրում ունակութիւնները, գաղափարները վճռական աւելի՛ դեր ունենան, քան արիւնը, ցեղը... Օսմանցիք, որ ցեղային տեսակետով եւ մարմնական յատկանիշներով հազիւ թէ կարող են թուրք կոչուել (այնքան արիւնախառնուել են նրանք), այնուամենայնիւ թուրք են կատարելապէս... թուրք են իրանց մտքերով»: Եւ շատերն են իտալացի պատմաբան Ֆերերոյի հետ պատասխանում. «...մարդու հոգեբանութիւնն իր խորքում նոյնն է մնում եւ նոյնիսկ, եթէ դարաշրջանից դարաշրջան մեծապէս փոխուի նրա մշակոյթը. դա չի փոխում նրա մտքերի հիմնական բնոյթը»:

Բայց մարդու ո՛չ միայն մտքերի, այլեւ հոգեգծերի բնոյթը փոխում է այլասերումի միջոցով: Այլասերումն ինքնին հնարաւոր է դառնում այն իրողութեամբ, որ դրան ենթակայ էակների մէջ սպառուած են իրանց նախկին ցեղի բարոյական թէ հոգեկան ոյժերը: Այլասերուածները պահում են միայն արեան խառնուածքը (տենպերամենտ), իսկ հոգեգծութեամբ՝ նրանք ամբողջովին նուաճում են ձուլող ցեղի, ազգի, ժողովրդի կողմից: Ոգին աւելի՛ է պահպանողական, քան արիւնը, բայց ինքնապահպանումի հնարաւորութիւն ունի միայն ազգային, ցեղային ձեւ ու բովանդակութիւն ստացած ոգին: Այլասերուածը կորցնում է ոգեպահական իր կարողութիւնը: Նրա մէջ գործող բնազդական ոյժերը մղում են նրան իր ինքնապաշտպանութիւնը պայմանաւորել ձուլող ժողովրդի հոգեբանութեան իւրացումով: Յայտնի է, որ կենսաբանական թէ հոգեբանական պատճառներով, ցեղերի արենախառնումով չի ազնուանում նրանցից նուազարժէքը, այլ՝ խաթարում, վատասերում է արժէքաւորը: Այսպէս՝ քրիստոնեայ ժողովուրդներից ստացած արիւնն ո՛չ թէ բարեխառնութիւն մտցրեց թուրքերի բնազդների աշխարհում, այլ՝ հոգեբանութեամբ թուրքացրեց ձուլուածներին: Աւելին. ուրացող սերունդների մէջ առանձնապէս շեշտում է նուաճող ժողովրդի հոգեգծերն

իւրացնելու եւ ցուցադրելու բռնագրօսիկ ճիգը, որ խաթարումի օրէնքով, աստիճանաբար յանգում է մոլեգնութեան: Այդ է պատճառը, որ, օրինակ, Կոնիայի շրջանի համեմատաբար զտարիւն մնացած նախկին սելջուկների օրուայ սերունդներն եղեմնաբաղձութեան մէջ աւելի՛ են կրաւորական, քան միւս շրջանների խառնածին, թաթարական տիպը գրեթէ կորցրած թուրքերը:

Առանց ըստ էութեան աւելի խորանալու հարցի մանրամասնութիւնների մէջ, մենք բաւարար հիմքեր ունենք եզրակացնելու, թէ արիւնն է նախապէս որոշում ոգու ճակատագիրը, բայց մի անգամ կաղապարուած ոգին ապրում եւ իշխում է տուեալ ժողովրդի մէջ, թէկուզ սա ամենայորդ արեւնախառնումով փոխած լինի մարմնական իր յատկանիշները:

Պղծումով ոճրագործելու հրճուանքը հնուց ի վեր յատուկ է մոնղոլ ցեղին եւ հետեւեանք է նրա եղեմնաբաղձ ոգու անփոփոխելիութեանը. «Թիմուր Լանգը վայրենի իր ձիաւորների ոտքի տակ ոչնչացնել է տալիս վրացի պատանիների եւ երեխաների ամբողջ խմբեր: Սուլթան Ջալալէդդինը ԺԳ. դարում, հազարաւոր երեխաներ թափում է գետերը. նա ոչնչացնում է 100.000 վրացի: Վերցնել է տալիս Սիոնի տաճարի գմբէթը եւ բարձրանում նրա վրայ, որպէսզի հրճուի Թիֆլիսի բնակչութեան պատճառած չարչարանքների պատկերից»: Արտայայտութեան իրանց ձեւերով, 19-րդ թէ 20-րդ դարերում տեղի ունեցած յունական, բուլղարական, հայկական, քրդական եւն. եղեմներն ոչնչով են տարբերում պատմական անցեալում թուրքաթաթարների գործած նախճիրներից: Դրանք բոլորն էլ պարտուածների, խաբէութեամբ անձնատուր եղածների կամ դիմադրելու որեւէ հնարաւորութիւնից զրկուածների զանգուածային ոչնչացումներ են - զազրելի, գարշագործ տեսարաններ պղծումի, չարչարումի եւ արիւնարբումի: Պատմութիւնից յայտնի է, որ դեռ Տուղրիլ Բէկի, Ալփ Արսլանի օրերին սովորութիւն էր խմել զոհերի տաք արիւնը կամ նրանով բաղնիքներ առնել: Թիմուրն ողջ-ողջ թաղել էր տալիս մարդկանց եւ նրանց հողաթմբերի վրայ ձիարշաւային խրախճանքներ սարքում: Ռուսաստանում թաթարները գետին էին պառկեցնում տղամարդկանց եւ նրանց վրայ՝ հաւաքական բռնաբարման ենթարկում կանանց: Նրանք ապականում էին եկեղեցիները, գերեզմանոցների խաչքարերը, պղծում սրբերի, սրբուհիների պատկերները: Անիի մայր տաճարի գմբէթը խորտակելուց յետոյ Ալփ Արսլանը վերացնել տուեց նրա ճաճանչափայլ մեծ խաչը, որն իբրեւ

մահմեդականների ուղից կոխան՝ զետեղուեց Նախիջեւանի մզկիթի դրան շենին:

Պղծումով ոչնչացնելու բոլոր այս ձեւերը վերակրկնուեցին Հայկական եղեռնի օրերին: Շատ դէպքերում անգամ կանոնաւոր բանակի զինուորները ճեղքել են յղի կանանց որովայնները եւ ծնանելի երեխաներին ցցած իրանց սուիճների ծայրը՝ խրախճանքներ են սարքել: Գանակոծումից կամ վերքերից հոգեվարող ծնողների առաջ պղծումով սպանել են նրանց երեխաներին: Շատ վայրերում, ինչպէս Մանազկերտի, Արճէշի գիւղերում, երեխաներին ողջ-ողջ նետել են եռացող կաթսաների մէջ, ապա նրանց խաչուած դիակները դրել զարհուրանքից խելագար մայրերի առաջ, պահանջելով՝ կամ իսլամն ընդունել, կամ ուտել սեփական զաւակների եփած միսը: Գեղանի աղջիկներին, հարսներին, որոնք մերժել են ենթարկուել սպանիչների կրքերին կամ ընդունել իսլամը, նահատակել են աստիճանական անդամահատումով՝ քաշելով նրանց եղունգները, ատամները, մէկիկ-մէկիկ կտրելով մատները, ականջները, քիթը, շրթունքները, փորելով աչքերը: Ջազրելի անարգանքների են ենթարկել մասնաւորապէս հոգեւորականներին, որոնցից շատերին խոշտանգելուց յետոյ, կիսամեռ կամ մեռել վիճակում՝ նաեւ խաչել են: Եկեղեցիները, վանքերը կործանելուց առաջ (եւ թանկարժէք առարկաները կողոպտելուց յետոյ), ապականել են: Գրքերն այրել են, որմնանկարների սրբերի աչքերը փորել են սուիճով: Յիսուսի, Տիրամօր, սրբերի, սրբուհիների պատկերներն ոչնչացրել են հրէշային պղծումներով – որպէս թէ իրական մարդկանց բռնաբարելիս, չարչարելիս եւ սպաննելիս լինեն: Այս բոլորն ո՛չ միայն 1915-ին՝ թուրքաց Հայաստանում, այլեւ հետագային՝ անգամ Կովկասում: Բագուի 1918թ. դէպքերի ականատեսները պատմում են, որ թուրքերը խմում էին մորթուած հայերի արիւնը, կամ ջախջախելով նրանց զանգերը՝ ուղեղները քսում էին իրանց լաթերին:

Եւ, վերջապէս, նախորդ համաշխարհային պատերազմի օրերին ֆրանսիացի, անգլիացի, մասնաւորապէս յոյն սպաները, զինուորները զգացին, որ թուրքի ձեռք գերի ընկած մարդը չի կարող իր պատուով մեռնել, որ դա իր զոհերին չարչարում է պղծելով, սպանում է երկարատեւ խոշտանգումով եւ թաղում՝ ապականելով:

Արիական ցեղին է յատուկ հաւատը, թէ ստեղծագործ ոգին մահ չունի: Թուրքի ոգուն անկորնչելի է միայն ոչնչացումի, եղեռնումի, պղծումի զգացումը: Դա կարող է պատմական եւ ո՛չ մի յիշողութիւն

չունենալ Տուղրիլի, Ալփ Արսլանի, Թիմուրի, ճենկիզի մասին, բայց բնազդների շղթայազերծման ժամանակ հարազատօրէն վերակրկնում է նրանց գործերը: Այս պարագան ինքնին մի ապացոյց է բնազդների, ոգու զօրաւոր ինքնապահպանութեան, ինչպէս նաեւ այն բանի, թէ քաղաքակրթական ձեւերի իւրացումով ստորնաբնազդ մի ցեղ չի կարող ընդունակ դառնալ նաեւ մշակութաստեղծումի եւ թէ արտաքին բոլոր կարգի ազդեցութիւնները - անգամ կրօնը, դաստիարակութիւնը - նպաստում են միայն ներքին ընդունակութիւնների զարգացման, բայց ո՛չ երբեք՝ փոխում նաեւ ոգու բնութիւնը: Այստեղ՝ բուն պատճառը Չայկական եղեռնի:

Չայկ Ասատրյան
«Չայաստան - Արիական նախադիրք
Առաջավոր Ասիայում»,
Սոֆիա, 1942թ.

**ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՃՐԱՎԱՆՂԱԿԸ
ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է
Մուշեղ Լալայան**

«Հայկական բարձրավանդակն է Հայոց պատմության գլխավոր թատերավայրը եւ դա է պատկերվում ու զգացվում իբրեւ մեր ամբողջական հայրենիք՝ անկախ ազգագրական պայմաններից եւ ժամանակների քաղաքական սահմանագծումներից»:

Հայկ Ասատրյան

Մարդու եւ աշխարհագրական միջավայրի փոխադարձ կապը վաղուց հաստատված է գիտությամբ: Այս իմաստով, ինչպես ուսուցանում է Ցեղային աշխարհայեցողությունը, Ազգը եւ Հայրենիքը՝ Բացարձակի ու Հավերժի հարթության մեջ կազմում են մեկ, անքակտելի ամբողջություն. Հայաստանը մնայուն հայրենիք է միայն հայերի համար, իսկ հայը հարատեւելի է միայն Հայաստանում: Ըստ այդմ, երբ մասնատված է հայոց հայրենիքը, խաթարված է նաեւ հայի էությունը, եւ քանի դեռ չունենք ամբողջական Հայաստան, հոգեբանորեն, հետեւապես եւ դիմագծորեն մնում ենք աղճատված:

Իսկ ո՞րն է այդ բնական Հայաստանը՝ հայոց հավիտենական հայրենիքը, որին, ինչպես ծնողին, չեն ընտրում:

Ցեղային աշխարհայեցողության մեջ առկա է տարբերակումը պատմական ու բնական Հայաստանի: Առաջինը պատմա-ազգագրական հասկացություն է, որով՝ հարափոփոխ, ենթակա սեղմումի կամ ընդլայնումի: Կա, սակայն, բնական Հայաստանը՝ որպես բնաշխարհագրական ըմբռնում, խիստ որոշակի բնական սահմաններով, որով եւ անփոփոխ: Դա բնաշխարհագրական այն անբաժանելի ամբողջությունն է, շրջապատի նկատմամբ բարձրադիր «լեռնային կղզին», որն աշխարհագրական գիտության կողմից կոչվում է Հայկական բարձրավանդակ: Հայկական բարձրավանդակը Աստուծոց կամ Բնությունից հայերիս տրված այն հողակտորն է, որին են միայն հարազատ եւ բնորոշ մեր հոգե-մարմնական գծերը: Սա այն բնատարածքն է, հայերիս միակ եւ կայուն «անվտանգության գոտին», որից դուրս այլ «հայրենիքներ»

փնտրելը ազգային ինքնասպանություն է, որից դուրս՝ ոգու եւ բնատարածքի անհամատեղելիության պայմաններում, հայը ենթակա է վատասերումի, ծուլումի:

Պատկերացրեք, որ հայերը, թեկուզ հոծ զանգվածներով եւ մեկուսացված, ապրում են, օրինակ, Մադագասկարում, ուր չեն տեսնում եւ չեն տենչում Արարատն ու Սեւանը, Արագածն ու Արաքսը, ապրում են տեղի բնական պայմաններից թելադրված կենցաղով, բարձրաբերձ լեռների փոխարեն՝ անծայրածիր օվկիանոսն է դառնում նրանց մտքի եւ հոգու երեւակայության սնուցիչը, փոխվում է նրանց դիմագիծը եւ այլն. անվիճելի է, որ նրանք աստիճանաբար կհեռանան իրենց էությունից ու կենթարկվեն տեսակափոխումի:

Քաղաքական սահմանագծումներով, Հայկական բարձրավանդակի մեծ մասն այսօր մերը չէ. ազգագրական պայմանները եւս ի նպաստ մեզ չեն՝ Արեւմտահայաստանը գերազանցապես բնակեցված է թուրքերով եւ քրդերով: Բայց արդյո՞ք այդ կորսվածը դադարում է Հայոց հայրենիք լինելուց: Դիմենք Նժդեհի խորհրդին. *«Իմ երկիրը ժամանակավորապես մնալով օտար լծի տակ, չի՛ կարող դառնալ այդ օտարի Հայրենիքը, քանզի Արեւելքի անուղղա խուժը, որ թրքություն կկոչվի, ոչինչ ունի տված այդ երկրին - ո՛չ մեծ մեռելներ, ո՛չ միտք, ո՛չ զգացում... այն ամենը, որ աննյութեղեն Հայրենիքը կստեղծե»*: Ահա՛ թե ինչո՛ւ է Ցեղակրոնությունը նշանաբանում՝ *«Հայաստանը՝ հայերին»*, որ ասել է՝ Հայկական բարձրավանդակը միայն Հայ՝ ցեղի հայրենիքն է: Այլ կերպ ասած՝ Հայկական բարձրավանդակի նկատմամբ հայրենատիրոջ (կուզեք՝ սեփականատիրոջ) մեծաշնորհ իրավունքը հայերի՛նս է:

Վերն ասվածից հետեւում է նաեւ, որ Հայկական բարձրավանդակի ամբողջական սահմաններում (իմա՝ ողջ բարձրավանդակին տիրելով) միայն մենք կարող ենք իբրեւ ազգություն եւ պետություն ներդաշնակորեն զարգանալ ու հարատեւել: Հայկական բարձրավանդակի՝ Առաջավոր Ասիայի այս ռազմավարական բանալու ամբողջական ձեռքբերումով է միայն Հայաստան պետությունը հնարավորություն ստանում ունենալու աշխարհառազմավարական նշանակություն. այն վերստին դառնում է տարանցիկ ուղիների խաչմերուկ, հսկում առաջավորասիական չորս խոշոր գետերի ակունքները (հանգամանք, որը զգալի դեր է խաղում՝ այսօր Թուրքիան դարձնելու տարածաշրջանում գերիշխող), ինչպես եւ, որ պակաս կարելու չէ, տեր դառնում շատ ժողովուրդների բաղձանք հանդիսացող մեր փարթամ արտավայրերին (մի գրեթե անտեսված իրողություն, որը էական է հանդիսացել քոչվոր մի շարք ցեղերի՝ մեր բարձրավանդակում վերջնական հանգրվան գտնելու

գործում): «Չայկական լեռնաշխարհը ներկայացնում է աշխարհագրական, մշակութապատմական, ինչպես նաև տնտեսական եւ ընդհանուր էթնիկական մի ամբողջություն: Այստեղ հիմնված պետությունը չի կարող համարվել կայուն, եթե ամբողջապես չի զբաղեցնում այդ լեռնային տանիքը՝ իր բնական թեքություններով», - ասում է Ադոնցը:

Այսօր խաթարված է նաև մեր էության ամբողջականությունը. հայությունը սեղմված է իր Չայրենիքի ընդամենը 1/10-ում, իսկ դա նշանակում է, որ մնացած մեծ մասի բնական ներուժը նա չի ստանում: Չի կարելի հիշողության կամ մտապատկերի մեջ տեղավորել պապերից լսած, գրքերում կարդացած եւ լուսանկարներում տեսած Նեմրուքի վեհությունը կամ Վանա լճի գեղեցկությունը եւ համարել, թե սեփական հոգեկան կերտվածքն անհրաժեշտ սնունդ ստացավ բնական միջավայրից: Պետք է այդ միջավայրում ապրել: Կորցնելով այս կամ այն բարբառը, տարազը, մոռացության տալով «տեղական» սովորույթ կամ ավանդույթ՝ հայությունը կորցնում է իր էության ամբողջականությունը: Ահա՛ թե ինչու հայության առաջնային խնդիրն է՝ *հայրենատիրություն:*

Սա մեզ համար տնտեսական խնդիր չէ՛, այլ՝ գոյաբանական, ուր փնտրում ենք ո՛չ թե տնտեսական շահավետություն, այլ՝ էություն: «Չայրենիք տենչալով, մենք ավելի կուզենք Մասիսի ճակատը տեսնել, քան Արարատյան դաշտի մեջ բամբակ մշակել: Մեր նախահայրերու սրբաստանները եւ գերեզմանները ձգողական ավելի մեծ խորհուրդ ունին, քան Մշո, Կարնո կամ Վանա շուկաները», - այսպես էին ասում 30-ականների ցեղային-հայրենատիրական շարժման մեր մեծերը. այդպես պետք է հասկանանք եւ մենք:

Այսպիսով, հայրենատիրությունը հայության մոտակա առաքելությունն է, որը պատմության բերումով, պետք է իրականացվի նախ թուրքի հետ անխուսափելի բախումով: Այո՛, բախումով, քանզի մնացած ճանապարհները պատմությամբ արդարացված չեն: Եվ «խաղաղ գոյակցության» անարժեք քարոզները միայն մե՛զ կարող են խաբել, բայց ո՛չ թուրքին:

- Թող լինի խաղաղ գոյակցություն, - ասում ենք մենք, - միայն ո՛չ մեր Չայրենի հողում:

Ի՞նչ է նվաճել Չայոց բանակը Արցախյան ազատամարտի տարիներին: Նա ազատագրել է այն, ինչն ի վերուստ տրված է մեզ: Մնացած բացատրությունները, պատմության հավիտենության մեջ, արժեք չունեն:

- Ենթադրենք ազատագրել ենք Արեւմտահայաստանը եւ Չայկական բանակը հուսալիորեն պաշտպանում է այն, միեւնույն է՝ այդ տարածքները վերաբնակեցնել չենք կարող, քանզի ոչ ոք չի գնա այնտեղ

ապրելու,- այսպես դատողներ մեզանում քիչ չեն: Մենք նայում ենք պատմությանը եւ փաստում, որ այն հազեցած է ժողովուրդների զանգվածային վերաբնակեցումներով: Ինչո՞ւ Շապուհն ու Շահ Աբասը, թուրքերն ու բուլղեիկները, կանգ չառնելով միջոցների առաջ, կարողացան հայերիս տեղահանել եւ հաստատել օտար ափերում, իսկ մենք ընդունակ պիտի չլինենք սեփական ժողովրդին վերաբնակեցնել Հայրենի հողում: Հրեաները՝ մեծագույն կամքի ուժով, վերատիրեցին ու վերաբնակեցրին թշնամիներով շրջապատված եւ շուրջ երկու հազարամյակ կորսված իրենց հայրենիքը*:

Ուրեմն, էականը նպատակադրումն է եւ այն իրացնելու անընկճելի կամքը:

Մենք հավատում ենք մեր Ցեղի կամքի ամենագորությանը, եւ մնում է, որ հաղորդակից լինենք նրան:

* Հայրենատիրության խնդրի հետ կապված՝ հաճախ են տարվում զուգահեռներ մեր եւ հրեաների միջեւ, ինչը, կարծում ենք, հիմնազուրկ չէ: Հակաճառողներն ասում են՝ մի՞թե կարելի է մեզ համեմատել հրեաների հետ. նրանք գաղափարախոսություն ունեն, կապիտալ, իսկ մե՞նք... Երեւի թե հասկանալի է, որ այդ ամենը միանգամից կամ ինքնին չի ստեղծվել: Սկզբում շարադրել են Մովսեսի հնգամատյանը (Թորա), տարագրվելուց հետո՝ պայմանները ստիպել են գրել Թալմուդը: Երկար դեգերումներից հետո, մի շարք մտածված քայլերով, նախ՝ հիմնել են ընդամենը 14.000 քառ. կմ տարածքով պետություն, ապա՝ իրենց հարեւանների հաշվին ընդլայնել այն... Մենք ստեղծած ունենք Ցեղակրոնություն, Տարոնականություն, որոնց հիմքի վրա, նույնիսկ մեկ սերնդի նպատակամղված ջանքերով, կարելի է ամբողջացնել Հայոց ազգային գաղափարախոսությունը: Բայց, ի տարբերություն հրեաների, դրանք մեզ համար կյանքի ուղենիշ չեն, եւ մեզանում, որպես կանոն, յուրաքանչյուր նոր սերունդ փորձում է ամեն ինչ սկսել նորից: Անշուշտ, նաեւ համեմատելի չեն մեր եւ հրեաների կապիտալները, հատկապես որ հայ մեծահարուստները, հիմնականում, նախընտրում են իրենց ունեցվածքը թողնել օտարներին, քան ծառայեցնել Հայրենիքին (դարձյալ՝ ի տարբերություն հրեաների): Բայց չհուսահատվենք. Իսրայելը ստեղծվեց գրեթե ոչնչից, իսկ մենք ունենք Հայաստան պետություն եւ, որ պակաս կարելուր չէ, միատարր բնակչություն:

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ
ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ
*Ռուբեն Մելքոնյան***

Ինչպես հայտնի է, Հայոց ցեղասպանության փաստի միջազգային ճանաչման դեմ պայքարը կարելու տեղ է զբաղեցնում Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ: 2015-ին ընդառաջ Թուրքիան մոբիլիզացնում է իր հին մեթոդները եւ դրանց հավելում նորերն ինչպես արտաքին, այնպես էլ ներքին քաղաքականության ասպարեզում:

Մասնավորապես, ահռելի ֆինանսական ռեսուրսներ են ներդրվում Հայոց ցեղասպանության փաստը ժխտող հակագիտական գրականության տպագրության, թարգմանության եւ տարածման գործում: Թուրքական «գիտական միտքը» փորձում է նոր «անվիճարկելի» փաստեր գցել շրջանառության մեջ: Օրինակ, վերջերս հայտարարվեց, թե Հայոց ցեղասպանության փաստը հերքելու համար հայտնաբերվել են լուրջ տվյալներ՝ կապված Մալթայի դատավարության հետ: Ըստ անգլո-ամերիկյան մի փաստաթղթի, Մալթայում պահվող եւ Հայոց ցեղասպանության համար պատասխանատու օսմանյան պաշտոնյաներն ազատ են արձակվել, քանի որ *«նրանց դեմ ոչ մի ապացույց հնարավոր չի եղել գտնել»*: Այն, որ թուրք գիտնականների կողմից այս «հայտնագործությունը» թուրքական իշխանություններին ներկայացվել է որպես լուրջ փաստարկ, ապացուցում է նաեւ այն հանգամանքը, որ Թուրքիայի՝ Եվրամիության հետ զլխավոր բանակցող եւ նախարար Էգեմեն Բաղըշը վերջերս այցելել է Մալթա եւ հայտարարել. *«1915-ի դեպքերի հետ կապված Թուրքիան հենց Մալթայի դատավարությունների ժամանակ է արդարացվել: Դատարանը 1915-ին տեղի ունեցած դեպքերի համար ձերբակալված օսմանյան պաշտոնյաներին արդարացրել է: Եվ այդ որոշումն ընդունողը անգլիացի դատավոր է»*: Նաեւ հայտարարվում է, որ այս «լուրջ հայտնագործությունը» Թուրքիան օգտագործելու է միջազգային հարթակներում՝ որպես փաստարկ առ այն, որ *«հայերի ցեղասպանությունն իրականում տեղի չի ունեցել»*:

Նկատենք, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտից հետո ձերբակալվել էին Հայոց ցեղասպանությունը կազմակերպած, իրականացրած եւ մեղսակցություն ունեցած օսմանյան բազմաթիվ

պաշտոնյաներ, որոնց մի մասին հետագայում տեղափոխել են Մալթա: Ավելի ուշ, քենալական շարժման ծավալման հետեւանքով փոխվում է իրավիճակը, եւ Մալթայի աքսորյալ հանցագործները դառնում են Անգլիայի ու քենալական իշխանությունների միջեւ ընթացող քաղաքական առեւտրի առարկա. առավել կոնկրետ՝ տեղի է ունենում անգլիացի եւ թուրք գերիների փոխանակում: Այդ հանցագործներից շատերը, վերադառնալով Թուրքիա, բարձր պաշտոններ են ստանում՝ դառնալով պատգամավոր, նախարար, մարզպետ եւ այլն: Բազմաթիվ են փաստերը, որոնք ապացուցում են, որ նրանք ազատ են արձակվել ոչ թե իրավական, այլ քաղաքական իրավիճակի փոփոխության հետեւանքով, իսկ անգլիական դիվանագիտությանը բնորոշ ձեռագիրը եւ մտածելակերպը արտացոլված են անգլիացի բարձրաստիճան մի դիվանագետի զեկույցում, որտեղ խոսելով ազատ արձակված թուրքերի մասին՝ նա նշում է. «Այդ մարդկանց մասին ինչքան քիչ բան խոսենք, այնքան լավ, բայց ես հնարավորինս փորձեցի հստակ պարզաբանում ներկայացնել այս նուրբ թեմայի շուրջ, թե արդյոք ինչու Մալթայում գտնվող թուրք աքսորյալներին բաց թողեցինք: Կարծում եմ, որ բոլորն էլ ինձ նման կվարվեին: Խորհրդարանի անդամները համոզված էին, որ մեկ անգլիացի գերին թուրքերով լի մի նավի արժեք ունի: Փոխանակումն էլ այս պատճառով իրականացվեց»:

Թուրքական վերլուծական շրջանակները եւս ակտիվորեն ներգրավված են Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման դեմ պայքարում, եւ նրանց գործունեությունն ու վերլուծությունները, բնականաբար, համահունչ են պետական քաղաքականությանը: Օրինակ՝ Եվրասիական անվտանգության եւ ստրատեգիական հետազոտությունների կենտրոնի նախագահ Հաթեմ Ջաբարլըն մտահոգություն է հայտնում, որ թուրքական մամուլում աստիճանաբար ավելի շատ է խոսվում Հայոց ցեղասպանության մասին, եւ լրագրողների մեջ հայտնվում են անձինք, ովքեր պաշտպանում են հայկական տեսակետները եւ Թուրքիայից պահանջում ներողություն խնդրել: Որպես թարմ օրինակ հիշատակվում է թուրքական «Ռադիկալ» թերթի հոդվածագիր Օրհան Ջենգիզը: Ջաբարլըն իր վերլուծությունն ավարտում է Թուրքիայի համար հոռետեսական եզրահանգումներով եւ նշում. «Թուրքական մամուլում նմանատիպ տեսակետների տեղ գտնելու փաստը պետք է համարել հայկական քարոզչության լուրջ հաջողություն»:

2015-ին պատրաստվելու համատեքստում Թուրքիան հայտարարում է, որ իրենց թիվ մեկ թշնամին հայկական սփյուռքն է, որի դեմ պայքարում

ներգրավված է նաև ադրբեջանական պետությունը: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման եւ հայկական սփյուռքի դեմ պայքարում փորձ է կատարվում ձեւավորել մի նոր ուժ՝ ի դեմս թուրք-ադրբեջանական լոբբիի, որը հատկապես ակտիվ գործում է Եվրոպայում եւ ԱՄՆ-ում: Օրինակ՝ ԱՄՆ-ում կա «Երիտթուրքեր» շատ խորհրդանշական անունը կրող մի կառույց, որը միջոցառումներ է կազմակերպում «ընդդեմ հայկական ստերի», «ԱՍԱԼԱ-ի կողմից սպանված թուրք դիվանագետների հիշատակման», «Խոջալուի դեպքերի» թեմաներով: Սակայն այս հարցում ակնհայտ են նաև պանթյուրքիստական շեշտադրումները. «Երիտթուրքերը» նշում են, որ իրենց պայքարին են միանում ոչ միայն ամերիկաբնակ ադրբեջանցիները, այլև՝ ուզբեկները, թուրքմենները, ուլդուրները եւ այլ թյուրքական ժողովուրդներ:

Այս ամենին զուգահեռ, Թուրքիան կիրառում է նաև որոշ քողարկված մեթոդներ: Դեռևս մի քանի տարի առաջ արտաքին գործերի նախարար Դավութօղլուն թուրք դիվանագետներին հանձնարարել էր հայկական համայնքներում գտնել «երկխոսության» կողմնակից հատվածներ եւ ակտիվորեն աշխատել նրանց ուղղությամբ:

Պետք է ասել, որ Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման դեմ պայքարում թուրքական քաղաքական համակարգում ներկայացված գրեթե բոլոր ազդեցիկ կուսակցությունները, անկախ իրենց գաղափարախոսական կողմնորոշումներից, միասնական են: Իհարկե, Ժխտողական քաղաքականության եւ կեղծիքի մեծ մասն իրականացնում է իշխող Արդարություն եւ զարգացում կուսակցությունը, սակայն ընդդիմադիր ժողովրդա-հանրապետական եւ Ազգայնական շարժում կուսակցությունները փորձում են հետ չձնալ: Այսպես, Ժողովրդա-հանրապետական կուսակցության կառավարման խորհրդի վերջին նիստում, կուսակցության առաջնորդ Քենալ Քըլըչդարօղլուի նախագահությամբ, որոշում է ընդունվել թուրք պաշտոնաթող դիվանագետ եւ պատգամավոր Շուքրու Էլեքդաղից, որը հայտնի կեղծարարներից մեկն է, պահանջել «հայկական պնդումների» հետ կապված մի զեկույց եւ առաջարկներ, թե ինչ պետք է արվի դրանց դեմ: Կուսակցությունը պաշտոնական հաղորդագրություն է տարածել, որ նախաձեռնում է լայնածավալ աշխատանքներ Հայոց ցեղասպանության ճանաչման դեմ: Ազգայնական շարժում կուսակցության նախագահ Դելեթ Բահչելին էլ, օրերս ելույթ ունենալով Ֆրանսիայում, խիստ քննադատության է ենթարկել Սեմատի հայտնի որոշումը եւ սպառնալիքներ տեղացել հայկական սփյուռքի հասցեին: Միեւնույն ժամանակ, նա կոչ է արել թուրքերին միասնական պայքար մղել «հայկական պնդումների դեմ»:

Այս ամենին զուգահեռ, թուրքական իշխանությունն իր ազգայնամոլական կեցվածքը փորձում է նաեւ համատեղել, իբրեւ թե, ժողովրդավար քայլերի ու հայտարարությունների հետ, ինչը, միանշանակ, պետք է բնորոշել որպես իմիտացիա: Թուրք բարձրաստճան պաշտոնյաներն իրենց քայլերը տեղավորում են «ընդհանուր ցավի», «երկուստեք կորուստների» սնանկ թեզի համատեքստում: Այսպես, վարչապետ Էրդողանը վերջերս այցելելով գրքի տոնավաճառ՝ լրագրողների ներկայությամբ գնել է թուրք լրագրող Թահա Աքյոլի հեղինակած «Հայեր եւ թուրքեր. ընդհանուր ցավ» վերնագրով գիրքը՝ ցույց տալով, իբրեւ թե, իր հետաքրքրվածությունը թեմայով: Առավել ուշագրավ է այն, որ Թուրքիայի Ազգային ժողովի նախագահ Ջեմիլ Չիչեքը օրերս մասնակցել է Թուրքիայի Սոցիալ-դեմոկրատական կուսակցության կազմակերպած սիմպոզիումին, որը կրել է «Ցավերը կիսելու եւ վերքերը դարմանելու համար առաջին քայլ» խորագիրը: Ավելին, Ելույթ ունենալով այդ սիմպոզիումում՝ Չիչեքը հայտարարել է. *«Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Անատոլիայում տեղի է ունեցել աքսոր, ինչի հետեւանքով հայերին, որոնց հետ դարերով կողք կողքի ապրել ենք, պարտադրվել է լքել իրենց հայրենիքը: Մենք ունենք ընդհանուր ցավեր, նախ եւ առաջ պետք է դրանք ընդունենք»:* Փաստորեն՝ ապրիլի 24-ի նախօրյակին «301-րդ Ջեմիլը» փորձում է հանդուրժող եվրոպական պաշտոնյայի դիմակ կրել:

Նկատենք, որ Թուրքիայում թեւեւ հասարակական շարժումների զգալի մասն ուղղորդվում է պետության կողմից, սակայն, այնուամենայնիվ, կան նաեւ համարձակ նախաձեռնություններ: Դրանց շարքում կարելի է առանձնացնել Մարդու իրավունքների կազմակերպությունը եւ «Ռասիզմին ու ազգայնամոլությանը ասա կանգնիր» նախաձեռնությունը, որոնք հերթական անգամ ապրիլի 24-ին կազմակերպեցին Ցեղասպանության զոհերի հիշատակությանը նվիրված միջոցառումներ: Ստամբուլի Թաքսիմ հրապարակում անցկացված միջոցառման ժամանակ որպես ազգայնամոլության զոհ է հիշատակվել անցյալ տարի ապրիլի 24-ին զորամասում սպանված հայազգի զինծառայող Սեւակ Բալըքչըն: Կազմակերպիչներն իրենց գնահատականները եւ դիրքորոշումը ներկայացնող երկու նամակ են հղել Ամենայն Հայոց եւ Կիլիկիո կաթողիկոսներին: Հետաքրքիր է, որ զոհերի հիշատակի միջոցառման համար Մարդու իրավունքների կազմակերպությունը խորհրդանշական վայր է ընտրել՝ Ստամբուլի Թուրք իսլամական ստեղծագործությունների թանգարանի շենքը, որը 1915-ին ծառայել է որպես հայ աքսորյալների բանտ: Այս միջոցառումների կարելորդ առանձնահատկությունն այն է, որ

ի տարբերություն, օրինակ՝ թուրք մտավորականների կազմակերպած «Ներողություն ենք խնդրում հայերից» ստորագրահավաքի, կիրառվում է Հայոց ցեղասպանություն եզրը:

Պետք է արձանագրենք, որ թուրքական հասարակության մեջ հետզհետե ավելի են շատանում մարդիկ, ովքեր կարծում են, թե ավելի ճիշտ կլինի, որ Թուրքիան ճանաչի Հայոց ցեղասպանությունը, ներողություն խնդրի եւ դրանով ձերբազատվի իր իսկ քաղաքականության պատանդը լինելուց: Հարկ է դիտարկել նաեւ, որ այդ մարդիկ իրենց կարծիքն առավելապես բխեցնում են ոչ այնքան հայանպաստ դիրքերից, որքան Թուրքիայի շահերից ելնելով: Միեւնույն ժամանակ, կարելու է նկատել, որ իրենց պատմության հետ առերեսվելու պատրաստ թուրքերի եւ քրդերի թիվը չափազանց փոքր է Թուրքիայում. վերը նշված «Ռասիզմին ու ազգայնամոլությանը ասա կանգնիր» նախաձեռնության կազմակերպիչներն անգամ կարծում են, որ իրենց նման փոքրաթիվ ձախակողմյա ուժերով միայն հասարակական կարծիքը Թուրքիայում չի կարող փոխվել:

Ամփոփելով՝ նշենք, որ Հայոց ցեղասպանության ժխտման թուրքական քաղաքականությունը, մի կողմից, հանդիպում է որոշակի բարդությունների, իսկ մյուս կողմից՝ մշակում է ավելի քողարկված մեթոդներ, իր պայքարում ներառում է այլ ուժերի, ինչը պատմական ճշմարտության միջազգային ճանաչման ճանապարհին լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանի եւ հայության համար:

ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ **Գազիկ Տեր-Չարությունյան**

Միջուկային եւ ընդհանրապես զանգվածային ոչնչացման զենքի (ՁՈՁ) տարածման հնարավորությունն այսօր գլոբալ անվտանգության ամենաառաջնային խնդիրն է: Դեռեւս նախորդ դարի երկրորդ կեսին կատարված համալիր հետազոտություններից հետեւում է, որ ՁՈՁ լայնածավալ կիրառումը հանգեցնում է մոլորակային մասշտաբի աղետի: Թվում էր, որ ԱՄՆ – ԽՍՀՄ «սառը» հակամարտության ավարտից հետո նման ապոկալիպտիկ սցենար մարդկությանն այլեւս չի սպառնում: Սակայն իրական պատկերը սկզբունքորեն այլ է:

Սառը պատերազմի կողմերը լուրջ էին մոտենում խնդիրն եւ մշակել էին (հատկապես 1962թ. Կարիբյան ճգնաժամից հետո, երբ մարդկությունը կանգնեց միջուկային պատերազմի եզրին) բազմաթիվ պայմանագրեր ու մեխանիզմներ, որոնք առայսօր կարգավորում են այդ տերությունների «միջուկային» հարաբերություններն ու նվազեցնում ՁՈՁ կիրառման հավանականությունը: Նկատենք նաեւ, որ այդ ժամանակաշրջանում ԱՄՆ – ԽՍՀՄ (ՆԱՏՕ – Վարշավյան պայմանագիր) առճակատումն ընթանում էր «զսպման ռազմավարության» եւ «փոխադարձ երաշխավորված ոչնչացման դոկտրինի» շրջանակներում, ինչը նույնպես նվազեցնում էր միջուկային ռիսկերը:

Այսօր «միջուկային ակումբի» անդամների թիվը բավական մեծ է (ԱՄՆ, Ռուսաստան, Մեծ Բրիտանիա, Ֆրանսիա, Չինաստան, Իսրայել, ՅՈւԿԵՄ, Պակիստան, Հնդկաստան, Հյուսիսային Կորեա), եւ այդ թիվն աճելու միտում ունի: Մինչդեռ այդ ակումբի ասիական երկրների միջեւ «միջուկային հարաբերությունները» հեռու են կարգավորված լինելուց: Երանք խնդրի շուրջ երկխոսություն չեն վարում, իսկ ԱԷՄԳ խորհրդատվական գործառույթներն այդ պակասը լրացնելու համար բավարար չեն:

Ռիսկերի գնահատման տեսանկյունից առաջնահերթ կարեւորություն ունեն նաեւ այն դրդապատճառները, որոնք թելադրում են այս կամ այն պետությանը տիրապետել միջուկային զենքին: Չանդրադառնալով ՅՈւԿԵՄ, Պակիստանի եւ Հյուսիսային Կորեայի նախադեպերին՝ փորձենք դիտարկել Հայաստանի անվտանգությանն անմիջապես

առնչվող տարածաշրջանում՝ Մերծավոր Արեւելքում տիրող «միջուկային» իրավիճակը:

Չնայած Իսրայելի իշխանությունները պաշտոնապես դա չեն ընդունում, այդ պետությունը դեռևս նախորդ դարի 70-ականներից միջուկային զենք ունի, որի պաշարները գնահատվում են նվազագույնը 200 միավոր: Հաշվի առնելով տարածաշրջանային որոշ երկրների ծայրահեղական մոտեցումներն այդ պետության ֆիզիկական գոյության նկատմամբ՝ պետք է ընդունել, որ Իսրայելի ՁՈՁ ունենալու դրդապատճառները հիմնավորված են: Անշուշտ, այս հարցում կան նրբություններ, սակայն բոլոր պարագաներում ակնհայտ է, որ Իսրայելը գործում է «հակառակորդների զսպման եւ նրանց անխուսափելի կործանիչ պատասխան հասցնելու» ռազմավարության շրջանակներում: Միեւնույն ժամանակ, տարածաշրջանում Իսրայելը միջուկային սպառազինության առումով առայժմ մենատեր է եւ, ինչպես ցույց տվեցին 1981-ին Իրաքի, 2007-ին՝ Սիրիայի միջուկային կենտրոններին հասցրած օդային հարվածները, անում է հնարավոր ամեն բան իր այդ դիրքը պահպանելու համար: Կասկած չի հարուցում, որ Իսրայելը նույն ձեւով կվարվեր նաեւ այսօրվա իր հիմնական հակառակորդ Իրանի հետ, եթե ունենար համապատասխան ռեսուրսներ եւ վստահություն, որ հետեւանքները կործանարար չեն լինի իր համար: Այս տեսանկյունից փորձենք համառոտ դիտարկել նաեւ Իրանի միջուկային ծրագրի հիմնախնդիրը:

Եթե որպես հնարավոր աշխատանքային վարկած ընդունենք, որ Իրանն իր միջուկային ծրագրի շրջանակներում ՁՈՁ է մշակում, ապա պետք է փաստել, որ այս պետությունը նույնպես գործում է ինքնիշխանության եւ իր ժողովրդի կողմից ընտրված կառավարման համակարգի պաշտպանության համատեքստում: Այլ խոսքերով՝ այսօր մեկուսացված եւ ծանր տնտեսական պատժամիջոցների ենթարկված այդ պետությունը, որն ունի լարված հարաբերություններ միջուկային մենատեր Իսրայելի հետ, թերեւս ստիպված է, որպես ինքնապաշտպանության փաստարկ, մշակել միջուկային զենք: Կարող է տարօրինակ հնչել, սակայն պետք է ընդունել ՁՈՁ խնդրում Իրանի եւ Իսրայելի մոտիվացիաների նմանությունը:

Հատկանշական է, որ երկու երկրներում էլ (անշուշտ, յուրաքանչյուրում՝ իր չափով) կրոնականեւ վաղ պատմությունից եկող պատկերացումները որոշակի դերակատարում ունեն քաղաքական որոշումների ընդունման մեխանիզմներում. դա ընդունված է համարել որպես

փոխադարձ անզիջողականություն պայմանավորող գործոն: Սակայն քաղաքակրթական հարուստ անցյալը կարող է եւ հենք ծառայել, որպեսզի այդ երկրներն ընդհանուր եզրեր գտնեն: Հաշվի առնելով «արաբական գարնանից» հետո սուննիական գործոնի զգալի ակտիվացումը եւ հզորացումը՝ նման սցենարն ունի նաեւ պրագմատիկ հիմնավորում, քանի որ Իսրայել–Իրան հնարավոր երկխոսությունը որոշակիորեն կհավասարակշռի ուժերի հարաբերակցությունը տարածաշրջանում:

Անշուշտ, վերը բերված նկատառումները լիովին չեն բացառում Իսրայել–Իրան հակամարտության հնարավորությունը, սակայն, ըստ մեզ, տարածաշրջանի միջուկային սպառնալիքի հիմնական աղբյուրը ոչ թե Իսրայելը եւ Իրանն են, այլ ներկայում այդ երկու երկրների մրցակից Թուրքիան:

Նման վարկածը պայմանավորված է ոչ միայն այն կարելու հանգամանքով, որ վերջին մի քանի տասնամյակում այդ երկիրը ձգտել է կարողացել է ձեւավորել համապատասխան «միջուկային» ենթակառուցվածքներ, որոնք թույլ կտան նրան տեսանելի ապագայում ստեղծել միջուկային զենք. հայտնի է, որ նման հնարավորություններ ունեն նաեւ մի շարք այլ երկրներ: Թուրքիայից բխող միջուկային սպառնալիքը հենված է այն փաստի վրա, որ այդ երկիրը, չունենալով իր ինքնիշխանությանը կամ ֆիզիկական գոյությանն ուղղված սպառնալիք (ի տարբերություն Իսրայելի եւ Իրանի), կարող է կիրառել միջուկային զենք ոչ թե ինքնապաշտպանության, այլ զուտ էքսպանսիոնիստական եւ ռեւանջիստական նկատառումներով: Նման եզրակացությունը պայմանավորված է հետեւյալ հանգամանքներով.

- Արդի Թուրքիայում տարածում գտած եւ պաշտոնապես քաջալերվող գաղափարախոսությունները (նեոսամանիզմ, նեոպանթուրքիզմ, նեոպանիսլամիզմ) ունեն հստակ էքսպանսիոնիստական ուղղվածություն եւ հենված են ռեւանջիստական ու ազգայնամոլական դոկտրինաների վրա:

- Արդի Թուրքիան, հենվելով վերոնշյալ ագրեսիվ գաղափարախոսություններից բխող հիմնադրույթների վրա, անթաքույց ձգտում է որոշիչ ռազմաքաղաքական դերակատարում ունենալ եւ իր բաժինը ձեռք բերել տարածաշրջանում ընթացող աշխարհաքաղաքական եւ աշխարհատնտեսական վերաբաժանման գործընթացներում:

- Թուրքիան եղեռնամոլ, ցեղասպան պետություն է. պետական

մակարդակով կազմակերպել է հայերի, հույների, քրդերի եւ ասորիների զանգվածային ոչնչացումը՝ ելնելով էթնիկ պատկանելության հատկանիշից:

Վերջին հանգամանքը, ինչպես նաեւ այն, որ արդի թուրքիան, որպես տարածաշրջանային երկիր, ձեւավորվել է ընդամենը միջնադարում, վկայում են այն մասին, որ ի տարբերություն Իսրայելի եւ Իրանի, այդ պետությունը չունի համապատասխան քաղաքակրթական նախահիմք եւ ավանդույթ, որը կսահմանափակեր նրա քաղաքական ագրեսիվության արտահայտությունները, այդ թվում նաեւ միջուկային զենքի կիրառումով:

**ԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ
ԻՍՐԱՅԵԼ – ԿԻՊՐՈՍ ՁԵՎԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՆՑՔԻ ՄԻՋԵՎ
Սեւակ Սարուխանյան**

Արեւելյան Միջերկրածովի շրջանում բնական գազի խոշոր պաշարների հայտնաբերումն այս տարածաշրջանը դարձրել է նոր էներգետիկ եւ քաղաքական հակասությունների թատերաբեմ: Մի կողմից՝ Իսրայելն ու Կիպրոսը, որոնց ծովային տարածքներում էլ հենց հայտնաբերվել են պաշարները, մյուս կողմից՝ Թուրքիան, որը ցանկանում է ամրապնդել դիրքերը Միջերկրածովյան ողջ տարածքում, նպատակ ունեն իրենց իրավունքները պաշտպանել գազային հանքածովային պաշարների նկատմամբ:

**«Լեւիաֆան» հանքավայրը՝ որպես Իսրայելի
էներգետիկ անվտանգության աղբյուր**

Իսրայելական Չայֆայից 135 կմ հեռավորության վրա, Միջերկրական ծովի շելֆում գտնվող «Լեւիաֆան» բնական գազի հանքավայրը հայտնաբերվել է 2010-ին, ամերիկյան Noble Energy ընկերության կողմից, որը դեռեւս 2008-ին Իսրայելի կառավարության հետ կնքել էր պայմանագիր ծովային շելֆի շրջանում բնական գազի եւ նավթի պաշարների որոնման համատեղ աշխատանքներ սկսելու վերաբերյալ: Արդեն 2010 թվականին հայտնաբերված պաշարները կարելի է համարել տպավորիչ, քանի որ համաձայն Noble Energy-ի՝ բնական գազի ընդհանուր պաշարներն այս հանքավայրում գնահատվում են մինչեւ 450 մլրդ մ³, ինչն այն դարձնում է աշխարհի խոշորագույն հանքավայրերից մեկը: Իսրայելի համար «Լեւիաֆանի» կարեւորությունը պայմանավորված է նրանով, որ հրեական պետությունը դրա շնորհիվ կարող է ազատվել Եգիպտոսից էներգետիկ կախվածությունից, որտեղից Իսրայել է ներկրվում բնական գազը: Չաշվի առնելով 2011-ից Եգիպտոսում սկսված քաղաքական գործընթացները, որոնք ի վերջո իշխանության կարող են բերել հակաիսրայելական կոշտ դիրքորոշում ունեցող «Մուսուլման եղբայրներին», բնական գազի հանքավայրերի հայտնաբերումն ու մշակումն Իսրայելի համար դարձել է կարեւորագույն նշանակության ազգային խնդիր:

Մյուս կողմից, Իսրայելը նաև անմիջականորեն շահագրգռված է նվազեցնելու էներգետիկ համագործակցության մակարդակը Թուրքիայի հետ, որը վերջին տարիներին հանդես չի գալիս որպես Իսրայելի վստահելի գործընկեր եւ նպատակ ունի ամրապնդել դիրքերը Մերձավոր Արևելքում, ինչի համար լայնորեն օգտագործում է տեղի իսլամիստներին: Առավելագույնը տարեկան 3 մլրդ մ³ գազի սպառման ծավալներ ունեցող Իսրայելի համար 450 մլրդ մ³ պաշարներ ունեցող գազի հանքավայրը կարող է 100 տարուց ավելի դառնալ բնական գազի ստացման աղբյուր, ինչը հիմնավորապես կլուծի էներգետիկ անվտանգության ապահովման խնդիրը եւ կապահովի պետության էներգետիկ անկախությունը Թուրքիայից եւ Եգիպտոսից:

Միևնույն ժամանակ, պետք է նշել, որ Լեւիաֆանը պարունակում է նաև բավական խոշոր նավթային պաշարներ, որոնց կոնկրետ չափը դեռևս որոշված չէ: Նախնական հետախուզության տվյալներով՝ դրանց չափը կարող է անցնել 500 մլն տոննան, ինչը հանքավայրը դարձնում է նաև կարելիոր նավթային գործոն: Համապատասխան ներդրումների դեպքում Իսրայելը կարող է ոչ միայն ապահովել նավթի սեփական կարիքները, այլև դառնալ նավթի արտահանող (թեև ոչ խոշոր): Սա կարելիոր նշանակություն ունեցող իրադարձություն կարող է լինել ոչ միայն Իսրայելի, այլ նաև ամբողջ տարածաշրջանի համար, քանի որ լիովին կվերանա Իսրայելի կախվածությունն ադրբեջանական նավթից, ինչպես նաև թուրքական Ջեյհան նավահանգստից: Վերջինս, ըստ թուրքական պատկերացումների, պետք է դառնա տարածաշրջանային խոշորագույն էներգետիկ հաբը, որի նշանակությունը հիմնականում պայմանավորված է Միջերկրածովյան տարածաշրջանի՝ Կասպիցի շրջանից նավթային կախվածությամբ: Այդ կախվածությունը «Լեւիաֆանի» շնորհիվ կարող է պարզապես վերանալ:

«Ափրոդիտե» հանքավայրը՝ որպես Կիպրոսի տնտեսական անվտանգության երաշխիք

«Ափրոդիտե» հանքավայրն, ըստ երկրաբանական չափանիշների, Իսրայելական «Լեւիաֆանի» բնական շարունակությունն է, բայց գտնվում է Կիպրոսի ծովային տարածքում: Այն հայտնաբերվել է 2011-ին, նույն Noble Energy ընկերության կողմից: Հանքավայրի ծավալներն ու պաշարները նշանակալից են: Արդեն իսկ կատարված երկրաբանական հետախուզական աշխատանքները ցույց են տալիս, որ հանքավայրում բնական գազի պաշարները կազմում են 400-600 մլրդ մ³, իսկ նավթի պաշարները կարող են անցնել 300 մլն տոննան: Եթե հաշվի առնենք, որ

«Ափրոդիտեն» եւ «Լեւիաֆանը» նույն հանքավայրի երկու տարբեր հատվածներն են, ապա կարող ենք ասել, որ հանքավայրը վերջին 10 տարիներին հայտնաբերվածներից ամենախոշորն է:

«Ափրոդիտեի» հայտնաբերումից հետո Կիպրոսն, ամենայն հավանականությամբ, կդառնա խոշոր էներգակիրներ արտահանող, հաշվի առնելով առաջին հերթին այն հանգամանքը, որ Կիպրոսի Հանրապետությունը չունի բնական գազի եւ նավթի սպառման խոշոր շուկա, ինչը պայմանավորված է երկրի տարածքում արդյունաբերական սեկտորի գրեթե ամբողջական բացակայությամբ:

Կիպրոսի համար հայտնաբերված գազի եւ նավթի պաշարները կարող են հանդիսանալ երկրի անկախության եւ ինքնիշխանության պահպանման երաշխիք: Հունաստանում աղետալի տնտեսական ճգնաժամի սկսվելուց հետո ֆինանսատնտեսական իրավիճակը Կիպրոսում վատթարացել է, քանի որ կիպրական տնտեսությունը եւ ֆինանսական համակարգն անմիջապես կապված են Հունաստանի հետ: Վերջինիս սնանկացումը կարող է հանգեցնել նաեւ Կիպրոսի սնանկացմանը, ինչի արդյունքում՝ նաեւ անցած 10 տարիներին թափ առած արտագաղթի տեմպերի ուժեղացմանը: Վերջին հանգամանքը բավական ցավալի իրողություն է Կիպրոսի հունական հանրապետության համար, քանզի հույն բնակչության արտահոսքին զուգահեռ՝ վերջին տարիներին մահմեդական, հիմնականում արաբ միգրանտների ներհոսքը երկիր աճել է, մանավանդ Իրաքի պատերազմից հետո: Նոր միգրանտների հոսք Կիպրոսում ակնկալում են նաեւ Սիրիայից, որտեղ սկսված քաղաքական ճգնաժամը կարող է էլ ավելի խորացնել էթնոդավանական հակասությունները եւ դեպի Կիպրոս արտահոսքի համար նոր հիմք ստեղծել:

Այս տեսանկյունից կիպրական իշխանությունները նավթային եւ գազային խոշոր պաշարները կարող են օգտագործել տնտեսական զարգացման ապահովման եւ հիմնականում հույների արտագաղթը կանգնեցնելու համար: Հասկանալի է, որ այս ամենը հաշվի առնելով՝ Կիպրոսը պատրաստ է անզիջում պայքար մղել նորահայտ հանքավայրերի նկատմամբ սեփական իրավունքների պաշտպանության համար, անգամ եթե սպառնալիքը գալիս է խոշոր եւ ազդեցիկ Թուրքիայից:

Թուրքիան եւ Միջերկրածովյան հանքավայրերը

2010-ից Թուրքիան ակտիվորեն վիճարկում է Կիպրոսի եւ Իսրայելի իրավունքները Միջերկրականում հայտնաբերված նավթագազային պաշարները տնօրինելու առումով: Հայտնաբերված հանքավայրերն այնքան հեռու են թուրքական ափերից, որ առանց որեւէ վերլուծության կարելի է

պնդել, որ թուրքական հավակնություններն այս հանքավայրերի նկատմամբ անհեթեթ են: Սակայն Անկարան այլ կարծիք ունի եւ որդեգրել է այնպիսի քաղաքական գիծ, որը կարող է բարդացնել Իսրայելի եւ Կիպրոսի հայտնաբերված հանքավայրերի մշակման ու համապատասխան մակակառույցի ստեղծման աշխատանքները:

Թուրքիան վիճարկում է այն հանգամանքը, որ հանքավայրերը գտնվում են այնպիսի ջրային տարածքում, որը բաժանված չէ հարեւան պետությունների միջեւ: Թեպետ 2010–2011թթ. Իսրայելն ու Կիպրոսը համաձայնեցրին ծովային սահմանազատման սկզբունքները եւ բուն սահմանազատման մասին համապատասխան պայմանագիր ստորագրեցին, Թուրքիան շարունակում է վիճարկել իսրայելական եւ կիպրական իրավունքները:

2011-ի հունիսին Թուրքիայի էներգետիկայի նախարար Թ.Յըլդըզը հայտարարեց, որ Կիպրոսի Հանրապետությունը ոչ մի իրավունք չունի բնական գազի արտահանում սկսել՝ առանց պաշարների վերաբաշխման հարցն Անկարայի հետ համաձայնեցնելու: Իսկ Կիպրոսի թուրքական մասի նախագահ Դերվիշ Էրօղլուն հայտարարությամբ հանդես եկավ, որ Միջերկրականում գտնված գազի պաշարները թեւ գտնվում են կղզու հարավային հատվածի հարեւանությամբ, դրանք չեն կարող շահագործվել միայն հույների կողմից, քանի որ ունեն ընդհանուր կղզիական նշանակություն:

2011-ի սեպտեմբերի 8-ին, արդեն իսրայելա-կիպրական սահմանազատման պայմանագրի ստորագրումից հետո, Թուրքիայի վարչապետ Ռեջեփ Էրդողանը Al-Jazeera-ին տված հարցազրույցում «Լեւիաֆան» նախագծի հետ կապված հայտարարեց, որ «Իսրայելը սկսել է գործել Միջերկրականում այնպես, ինչպես գործում է իրավունքներ ունեցողը: Իսրայելը նման իրավունքներ չունի»: Նույն հարցազրույցի ժամանակ Էրդողանը սպառնաց, որ թուրքական նավատորմը կարող է վերահսկողություն հաստատել Միջերկրականի ցանկացած մասում, որտեղ վիճարկվում են թուրքական շահերը: Թուրքիայի վարչապետի հայտարարությունը բավական մեծ արձագանք գտավ Իսրայելում, որտեղ այն ընկալվեց որպես թշնամական քայլ եւ սպառնալիք: Իսրայելի հետախուզության նախարար Դան Մերիդորը Էրդողանի հայտարարությունն անվանեց «համարձակ եւ լուրջ»՝ նշելով, որ Իսրայելը պատրաստ է ընդունել ցանկացած մարտահրավեր:

Էրդողանի հայտարարության հետ կապված իր հարցազրույցում Թուրքիայում Իսրայելի նախկին դեսպան Ալոն Լիելը, որն այսօր իսրայելական ամենահեղինակավոր վերլուծաբաններից է, պարզաբանեց, թե

իր համար թուրքական մոտեցման հիմնական պատճառը ոչ թե նավթահանքերն են, այլ իսրայելա-կիպրական համագործակցության ակտիվացումը (որը, ինչպես պարզվեց հետազայում, ունի ոչ միայն տնտեսական, այլև ռազմական բնույթ): Ըստ Լիելի, գազի եւ նավթի հսկայական պաշարներ հայտնաբերելուց հետո Իսրայելը Կիպրոսի տարածքում եւ տեղի կառավարության հետ համատեղ հսկայական նավահանգիստ է կառուցելու, որը պետք է ապահովի նավթի եւ գազի արտահանումը դեպի համաշխարհային շուկաներ: Ըստ Լիելի՝ հենց սա է ամենից շատ անհանգստացնում Թուրքիային, քանի որ նման հսկայական նավահանգիստն անմիջական սպառնալիք է Անկարայի ռազմավարությանը:

Իսրայել – Կիպրոս ռազմական դաշինք

2011-ի դեկտեմբերի 20-ին թուրքական ռազմական նավատորմը «Ափրոդիտե» եւ «Լեւիաֆան» հանքավայրերի հարեւանությամբ անսպասելիորեն ռազմածովային վարժանքներ սկսեց, որոնց ժամանակ տարածքում գործում էին հորատման հետազոտական աշխատանքներ իրականացնող իսրայելական եւ կիպրական նավեր: Սա եւ Իսրայելի, եւ Կիպրոսի կողմից դիտվեց որպես ակնհայտ սպառնալիք, ինչին հետեւեց Իսրայելի ենթակառուցվածքի նախարար Ու.Լանդաուի հայտարարությունը. «Մենք չարունակելու ենք մեր աշխատանքները եւ պատրաստ ենք պատասխանել ցանկացած հարձակման»: Պատահարից 1 օր անց Իսրայելը հայտարարեց, որ չեղյալացնում է Թուրքիայի զինված ուժերին ռազմական ինքնաթիռների համար նախատեսված LOROP համակարգերի մատակարարման մասին \$90 միլիոնանոց պայմանագիրը:

Սակայն Իսրայելի իրական ռազմաքաղաքական պատասխանը Թուրքիային երեւաց միայն 2012-ին: Փետրվարին Կիպրոսի նախագահի եւ Իսրայելի վարչապետի միջեւ կայացած բանակցությունների ժամանակ առաջին անգամ ամենաբարձր մակարդակով քննարկվեց իսրայելա-կիպրական փաստացի ռազմական դաշինքի ստեղծման հարցը: Jerusalem Post-ի ռազմական վերլուծաբան Յաակով Կացի կարծիքով՝ փետրվարյան բանակցությունների հիմնական թեման է եղել Կիպրոսի տարածքում Իսրայելի ռազմաօդային բազայի ստեղծումը՝ Միջերկրականի նավթագազային հանքավայրերը պաշտպանելու նպատակով: Ինչպես հաղորդում է UPI-ն, կիպրական կողմի համար առանցքային խնդիր է ոչ միայն իսրայելական ռազմաօդային, այլ նաեւ ռազմածովային բազայի ստեղծումը, ինչը հնարավորություն կտա պաշտպանել Կիպրոսի նավթագազային հանքավայրերը թուրքական հնարավոր հարձակումներից: Ներկայումս, ինչպես հաղորդում են տարբեր իսրայելական եւ

հունական ոչ պաշտոնական աղբյուրներ, այդ թվում եւ DEBKA-ն, Իսրայելն ու Կիպրոսը սկսել են ռազմաքաղաքական դաշինքի ստեղծման մասին համաձայնագրի մշակման աշխատանքները:

Այստեղ ուշադրություն պետք է դարձնել Միացյալ Նահանգների քաղաքականությանը: Չնայած Վաշինգտոնը հակասությունների սրման պայմաններում կոչ է անում կողմերին բանակցությունների մատել եւ խաղաղ ճանապարհով լուծել խնդիրները, Միացյալ Նահանգները, այնուամենայնիվ, աջակցություն է հայտնում Իսրայելին եւ Կիպրոսին: Ինչպես հայտնում է DEBKA-ն, դեռեւս 2011-ի դեկտեմբերի 20-ին, նախքան թուրքական նավատորմի կողմից զորավարժություններ սկսելը, ԱՄՆ պետքարտուղար Յ.Բլինթոնը Կիպրոսի ԱԳ նախարար Կազակու-Մարկուլիսի հետ հանդիպման ժամանակ ասել է. «Շարունակեք ակտիվորեն մշակել հանքավայրերը եւ ոչ մի ուշադրություն մի դարձրեք Թուրքիայի եւ նրա գործողությունների վրա»: Ամենայն հավանականությամբ, հենց Յ.Բլինթոնի կողմից հնչեցված աջակցության պատճառով արդեն հաջորդ օրը Կիպրոսի ԱԳ նախարարը Woodrow Wilson-ի կենտրոնում ունեցած ելույթի հիմնական թեզը դարձրեց Թուրքիայի քննադատությունը՝ ներկայացնելով Անկարային որպես տարածաշրջանային հակասությունների խորացման աղբյուր:

ԹՈՒՐՔԻԱՆ ԸՆԴԴԵՄ ՍԻՐԻԱՅԻ Հայկ Գաբրիելյան

Այս տարվա փետրվարի 24-ին Թունիսում տեղի ունեցած «Սիրիայի բարեկամներ» խմբի 1-ին հանդիպումից հետո Դավութոզլուն հայտարարեց. «Մենք թույլ չենք տա, որ Սիրիան վերածվի բաց երկնքի տակ բանտի: Չեն բացառում նաեւ Թուրքիայից դեպի Սիրիա մարդասիրական միջանցքների բացումը»:

Ի պատասխան՝ Սիրիայի արտգործնախարար Վալիդ Մուալեմը հայտարարեց. «Ես չեմ հասկանում, թե ինչու է Թուրքիան նման հետաքրքրություն ցուցաբերում Սիրիայի ներքին գործերին միջամտելու հարցում: Դավութոզլուն պետք է դադարեցնի իր ժողովրդավարական դասերը: Թուրքիան ապաստան է տալիս զինված խմբավորումներին, թույլ է տալիս հատել թուրք-սիրիական սահմանը: Այդպիսի հարեւանային հարաբերություններն անընդունելի են»: Օրեր անց մարդասիրական միջանցքների բացման անհրաժեշտության մասին բարձրաձայնեց նաեւ Էրդողանը՝ ՄԱԿ-ին մեղադրելով Սիրիայի հարցում անգործության մեջ:

Մարտի սկզբներին Թուրքիան կասեցրեց սիրիական նավթի ներկրումը: Թուրքիան տարեկան Սիրիայից ներկրում էր միջինը 300.000 տոննա հում նավթ, ինչի համար էլ այդ երկրին վճարում էր մոտ 200 միլիոն դոլար: Բացի այդ, Թուրքիան չեղյալ հայտարարեց դեպի Սիրիա ավտոբուսային բոլոր երթերը՝ իր այդ քայլը պատճառաբանելով Սիրիայի ճանապարհներին անվտանգության բացակայությամբ: Մարտի 22-ին Թուրքիան փակեց Դամասկոսում իր դեսպանատունը՝ Սիրիայում իր դիվանագիտական շահերը պաշտպանելու առաջադրանքը դնելով Հալեպում գտնվող հյուպատոսության վրա:

Դրանից հետո Թուրքիայի մաքսային եւ առեւտրային հարցերով նախարար Հայաթի Յազըջըն հայտարարեց, որ Դամասկոսում իր երկրի դեսպանատան փակումը չի նշանակում, թե փակվելու են նաեւ թուրք-սիրիական սահմանին ընկած մաքսային անցակետերը՝ ընդգծելով, որ սիրիական զարգացումների պատճառով զգալիորեն նվազել է այդ անցակետերով ելումուտը: Ապրիլի 1-ին «Թուրքական ավիաուղիներ» ընկերությունը ժամանակավորապես դադարեցրեց դեպի Սիրիա թռիչքները, իսկ ապրիլի 4-ին Թուրքիայի ԱԳՆ-ն անվտանգության նկատառումներով իր քաղաքացիներին կոչ արեց չայցելել Սիրիա:

Մարտի 28-ին Բաշար Ասադն ընդունեց Սիրիայի հարցով ՄԱԿ ու ԱՊԼ հատուկ ներկայացուցիչ Քոֆի Անանի խաղաղության պլանը: Դրանից անմիջապես հետո Էրդոդանը հայտարարեց, որ չի հավատում դրան, քանի որ Ասադը նախկինում բազում խոստումներ է տվել իրեն, Դավութօղլուն ու Գյուլին, սակայն չի կատարել դրանք: Դավութօղլուն, իր հերթին, հայտարարեց, որ յուրաքանչյուր ճգնաժամային կոնֆերանսից առաջ Ասադը նմանատիպ խոստումներ է տալիս՝ նկատի ունենալով Ստամբուլում կայանալիք «Սիրիայի բարեկամներ» խմբի 2-րդ հանդիպումը եւ ընդգծելով, որ Անանի պլանն Ասադի ռեժիմի վերջին հնարավորությունն է:

Ապրիլի 1-ին Ստամբուլում տեղի ունեցավ «Սիրիայի բարեկամներ» խմբի 2-րդ հանդիպումը¹, ինչը խիստ բացասաբար ընդունվեց հատկապես Իրանի կողմից: Իրանի խորհրդարանի նախագահ Ալի Լարիջանին, քննադատելով ստամբուլյան հանդիպումը, զարմանք հայտնեց, որ տարածաշրջանի մի շարք երկրներ (առաջին հերթին նկատի են առնվում Թուրքիան, Սաուդյան Արաբիան ու Կատարը) հանկարծ սկսել են իրենց ուշադրությունը բեւեռել Սիրիայի ժողովրդավարական խնդիրների վրա:

Իրանցի մի շարք չինովնիկներ հայտարարեցին, որ Անկարան շարունակում է ԱՄՆ եւ Իսրայելի քաղաքականությունը. «Դժբախտաբար, թուրք քաղաքական գործիչները վերածվել են արեւմտյան երկրների ձեռքի գործիքի: Էրդոդանը կորցրել է իր քաղաքական դիրքորոշումը, ինչի մասին վկայում են վերջին իրադարձությունները: Թուրքիան պետք է ամոթ ապրի, որ իր մոտ է հավաքել Սիրիայի թշնամիներին, որոնք հանդես են գալիս «Սիրիայի բարեկամներ» խմբի անվան տակ: Այդ հանդիպման ժամանակ Էրդոդանի ունեցած հակասիրիական ելույթն ու Բահրեյնի իրադարձությունները ցույց են տալիս, որ Թուրքիան իսլամական երկիր չէ»:

Չարկ է նշել, որ մարտի վերջին Իրան այցելած Էրդոդանն իրանցի պաշտոնյաների հետ քննարկել էր նաեւ Սիրիայի հարցը, ինչից հետո հայտարարել էր, որ իրենք համաձայնության չեն եկել տվյալ հարցում՝ ընդգծելով, որ Սիրիայի նկատմամբ Թուրքիայի ու Իրանի մոտեցումներն արմատականորեն տարբերվում են միմյանցից: Իրանական կողմը նրան հայտնել էր, որ թեեւ կողմ է Սիրիայում բարեփոխումների անցկացմանը, սակայն կտրականապես դեմ է Սիրիայի ներքին գործերին միջամտելուն:

Ստամբուլյան հանդիպումից հետո Դավութօղլուն հայտարարեց, որ իրենք Սիրիայի Ազգային խորհուրդը ճանաչում են որպես օրինական կառույց, եւ որ ՄԱԿ ԱԽ-ը պետք է անհապաղ որոշում ընդունի Սիրիայի վերաբերյալ: Ապրիլի 5-ին Էրդոդանի՝ արտաքին քաղաքականության

գծով գլխավոր խորհրդական Իբրահիմ Քալընը հերքեց վերջին շրջանում թուրքական մանուլում հաճախակիացած այն լուրերը, թե Թուրքիան պատրաստվում է բուժերային գոտի² ստեղծել Սիրիայի սահմանին, եթե Թուրքիայում սիրիացի փախստականների բանակը գերազանցի 50.000-ը: Դրանից առաջ PKK առաջնորդներից Մուրադ Քարայըլանը հայտարարել էր, որ եթե թուրքական բանակը հարձակվի «Արևմտյան Քրդստանի» (Սիրիայի քրդերի) վրա, ապա ողջ «Քրդստանը» կվերածվի պատերազմական դաշտի:

Ապրիլի 9-ի վաղ առավոտյան սիրիական բանակը գնդակոծեց թուրքական Քիլիս քաղաքի մոտ թուրք-սիրիական սահմանը հատած եւ թուրքական տարածքում գտնվող սիրիացի փախստականներին, ինչի հետևանքով զոհվեց 2 եւ վիրավորվեց 4 մարդ: Այս միջադեպից հետո չինական այցի ժամանակ Երդողանին ուղեկցող Դավութօղլուն ստիպված եղավ կիսատ թողնել այդ այցն ու վերադառնալ Թուրքիա: Իսկ Երդողանը Պեկինում հայտարարեց, որ սիրիական բանակը կոպտորեն խախտել է Թուրքիայի սահմանը. «Եթե մեր սահմանին կրկնվեն սիրիական սադրանքները, ապա մենք մեզ իրավունք ենք վերապահում ձեռնարկել պատասխան միջոցներ՝ միջազգային իրավունքի սահմաններում: Ես Սիրիայի ղեկավարությանը զգուշացնում եմ, որ նմանատիպ եւս մեկ գործողությանը կտրվի շատ կոշտ պատասխան: Եթե Սիրիայի ղեկավարությունը ստուգում է մեր նյարդերը, ապա թող չանհանգստանա, դրանք բավական ամուր են: Թուրքիան այն երկիր չէ, որի հետ կարելի է խաղալ նման խաղեր: Ներկայիս դրությամբ Թուրքիայում է գտնվում 25.000 սիրիացի փախստական: Մենք ցանկանում ենք հասկանալ, թե որքան կարող է այդ ցուցանիշն աճել՝ մինչեւ 100.000 կամ 200.000: Մենք ցանկանում ենք ստանալ այս հարցի պատասխանը: Թուրքիան չի փակի իր սահմանը՝ տեսնելով, թե ինչպես են իրենց տներից փախչում այդ մարդիկ: Սակայն դա չի կարող հավերժ տևել»: Չնայած Երդողանի այս զգուշացմանը՝ սիրիական բանակի կողմից թուրքական տարածքի գնդակոծումը կրկնվեց նաեւ ապրիլի 10-ի երեկոյան:

Ավելի ուշ Վալիդ Մուալեմը հայտարարեց, որ Թուրքիայի սահմանի գնդակոծումն այդ երկրի կառավարության կազմակերպած սադրանքն է. «Թուրքիան աջակցում է սիրիական ապօրինի խմբավորումներին: Թուրքիան նրանց զենք է մատակարարում, նրանց նախապատրաստման համար բազա է ստեղծում եւ թույլ է տալիս, որ իր տարածքից զինյալներն ապօրինաբար ներթափանցեն Սիրիա: Ահաբեկիչները սահմանամերձ գոտում ահաբեկում են Սիրիայի քաղաքացիներին՝ դրդելով փախուստի: Առաջացնելով փախստականների ճգնաժամ՝ Թուրքիայի ղեկավարութ-

յունը ցանկանում է այժմեականացնել բուժերային գոտու եւ հումանիտար միջանցքի ձեւավորման հարցը: Թուրքիան պետք է դատապարտվի Սիրիայի ներքին գործերին միջամտելու համար: Թուրքիայի այս բոլոր գործողությունները հակասում են Անանի՝ համընդհանուր հրադադարի հասնելու պլանին»:

Անշուշտ, չի բացառվում, որ թուրքական սահմանի գնդակոծման միջադեպերը կազմակերպած լինի հենց Թուրքիան՝ արտաքին ռազմական միջամտության օրինական հիմք ստեղծելու համար: Վերջին մեկ տարվա ընթացքում Թուրքիան բազմիցս զինված գրոհայինների խմբեր է գործուղել Սիրիա, որոնք էլ, ի դեպ, կարող էին գնդակոծել Թուրքիայի սահմանը, եւ որոնք իրենց գործողություններով նպաստում են սահմանամերձ շրջաններից դեպի այդ երկիր փախստականների ներհոսքը մեծացնելուն: Այն թուրքական իշխանություններին հնարավորություն է տալիս ավելի շատ ու խոսուն մեղադրանքներ հնչեցնել Սիրիայի ղեկավարության հասցեին՝ հայտարարություններ անելով սիրիացիների իրավունքների պաշտպանության, մարդասիրական միջանցքների, սանիտարական ու բուժերային գոտիների ստեղծման անհրաժեշտության մասին:

Միաժամանակ, Չինաստանից վերադարձած Էրդողանը չբացառեց, որ Անկարան կարող է դիմել ՆԱՏՕ օգնությանը՝ նկատի ունենալով ՆԱՏՕ կանոնադրության 5-րդ հոդվածը, որում նշված է, որ ՆԱՏՕ անդամ երկրներից մեկի դեմ ագրեսիան համարվում է ագրեսիա ողջ ՆԱՏՕ-ի դեմ: Դավութօղլուն իր հերթին հայտարարեց, որ սահմանի խախտման մասին իրենք իրազեկել են թե՛ ՄԱԿ-ին, թե՛ ՆԱՏՕ-ին: Սակայն Կանադայի արտգործնախարար Ջոն Բեյրոդը հայտարարեց, որ ՆԱՏՕ-ն Անկարային կգա օգնության միայն այն դեպքում, եթե սիրիացի զինվորները հատեն Թուրքիայի սահմանը: Պենտագոնի ղեկավար Լեոն Պանետան, իր հերթին, ԱՄՆ Կոնգրեսում հայտարարեց, որ իր կարծիքով՝ տվյալ փուլում դժվար կլինի 5-րդ հոդվածի իրագործումը, եւ որ դրա համար անհրաժեշտ է, որ Սիրիան ուղղակի սպառնալիք ներկայացնի Թուրքիային՝ ընդգծելով, որ 5-րդ հոդվածն օգտագործվել է միայն մեկ դեպքում, երբ ԱՄՆ-ը 2001 թվականի սեպտեմբերի 11-ին ենթարկվել էր հարձակման:

Ապրիլի 19-ին Փարիզում «Սիրիայի բարեկամներ» խմբի 3-րդ հանդիպման ժամանակ Յիլարի Բլինթոնը հայտարարեց, որ Թուրքիան պատրաստվում է օգտվել ՆԱՏՕ կանոնադրության 4-րդ հոդվածից, ըստ որի՝ ՆԱՏՕ-ն խորհրդակցություն է անցկացվում, եթե սպառնալիքի տակ է հայտնվում ՆԱՏՕ անդամ որեւէ երկրի քաղաքական եւ տարածքային

ամբողջականությունը կամ անվտանգությունը: Իսկ ՆԱՏՕ գլխավոր քարտուղար Անդերս ֆոգ Ռասմուսենը հայտարարեց, որ Թուրքիան՝ որպես ՆԱՏՕ անդամ, իրավունք ունի դիմել դաշինքին խորհրդակցության համար, եթե իր անվտանգությանն ուղղված սպառնալիք է տեսնում:

Այսպիսով, մենք ականատես ենք լինում, որ Թուրքիան ամեն գնով ձգտում է իշխանափոխություն իրականացնել Սիրիայում՝ իշխանությունից հեռացնելու համար Իրանի տարածաշրջանային դաշնակից Բաշար Ասադին: Այս մասին է վկայում նաև ապրիլի 12-ին Գյուլի գլխավոր խորհրդական Էրչաթ Չյուրմուզլուի այն հայտարարությունը, որ եթե անգամ Սիրիայում բռնություններն իսկապես դադարեցվեն, այնուամենայնիվ, սիրիացիները շարունակելու են պահանջել իշխող ռեժիմի հեռացումը, եւ հայտնի չէ, թե այդպիսի իրավիճակում ինչպես իրեն կդրսեւորի Սիրիայի ղեկավարությունը:

¹ Հանդիպմանը մասնակցելու համար Սիրիայի «Քրդական ազգային խորհուրդը» դիմել էր թուրքական իշխանություններին, սակայն մերժում էր ստացել: Մարտի 8-ին թուրքական մամուլը գրել էր, թե Սիրիայի քրդերը հայտարարել են երկրի տարածքում Աֆրին կենտրոնով «Արեւմտյան Քրդստանի» հռչակման մասին:

² WikiLeaks-ի կողմից հրապարակվող Stratfor-ի ցամաքագրության մեջ (15.11.2011) նշված է, որ Թուրքիայի ու Սիրիայի միջեւ երկկողմանի թշնամությունը համագործակցության վերածելու մասին 1998 թվականի հոկտեմբերի 20-ին Ադանայում կնքված համաձայնագրով Թուրքիան իրավունք ունի ՔԿԿ զինյալներին հետապնդելիս մուտք գործել Սիրիա եւ 15 կիլոմետր խորությամբ բուֆերային գոտի ձեւավորել:

**ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԿԱՏԱԱՄԲ 2012-ԻՆ
Բենիամին Պողոսյան**

Մերձավոր Արեւելքում ԱՄՆ քաղաքականության կարեւոր ուղղութիւններից մեկը թուրք-ամերիկյան հարաբերություններն են: Վերջին գրեթե ինը տարիների ընթացքում դրանք հիմնականում բնորոշվել են փոխադարձ անվստահությամբ եւ լարվածության աստիճանական ավելացմամբ: ԱՄՆ-ի՝ Իրաք ներխուժումից սկսած՝ տարածաշրջանային գրեթե բոլոր խնդիրներում երկու պետություններն ունեին տարբեր մոտեցումներ: Թուրքիան դեմ էր իրաքյան պատերազմին՝ համարելով, որ դա կհանգեցնի տարածաշրջանում քրդական գործոնի ուժեղացմանը, ինչպես նաեւ Իրանի դիրքերի ամրապնդմանը: Տարածաշրջանային պետությունների հետ հարաբերություններում պաշտոնական Անկարան փորձում էր գործել «զրո պրոբլեմներ հարեւանների հետ» սկզբունքի համաձայն՝ էականորեն բարելավելով հարաբերություններն Իրանի եւ Սիրիայի հետ, ինչն ակնհայտորեն նյարդայնացնում էր Բուշ Կրտսերի վարչակազմին: Ամերիկյան կողմին անհանգստացնում էր նաեւ պաշտոնական Անկարայի արտաքին քաղաքականությունում իսլամական գործոնի ուժեղացումը, ինչն արտահայտվում էր Իսրայելի հետ հարաբերությունների սրմամբ, ինչպես նաեւ պաղեստինյան ինքնավարության եւ ՀԱՄԱՍ կազմակերպության հետ հարաբերությունների բարելավմամբ:

Օբամայի վարչակազմի իշխանության գալուց հետո առաջին երեք տարիների ընթացքում թուրք-ամերիկյան հարաբերություններում առկա միտումները պահպանվում էին: Ամերիկյան նոր վարչակազմը փորձեց որդեգրել Մերձավոր Արեւելքում ԱՄՆ շահերի առաջնդման նպատակով «փափուկ ուժի» կիրառման սկզբունքը՝ հայտարարելով ավանդական հակառակորդների՝ Իրանի եւ Սիրիայի հետ հարաբերությունների բարելավման, ինչպես նաեւ պաղեստինյան խնդրում ավելի հավասարակշիռ մոտեցում որդեգրելու նպատակի մասին: Միաժամանակ, Օբամայի վարչակազմը փորձեց կարգավորել հարաբերություններն իսլամական աշխարհի հետ՝ հստակորեն տարանջատելով ահաբեկչության դեմ պայքարն իսլամի դեմ պայքարից:

Կարելի էր ենթադրել, որ այդ պայմաններում թուրք-ամերիկյան հարաբերություններում էական բարելավում կարձանագրվի, սակայն

2009–2011թթ. առաջին կեսն ընկած հատվածում, չնայած բարձր մակարդակով կայացած մի շարք հանդիպումներին, երկու պետությունների հարաբերությունները շարունակում էին հիմնականում բնորոշվել փոխադարձ անվստահությամբ: Այս շրջանում երկկողմ հակասությունների գագաթնակետը, թերեւս, ՄԱԿ Անվտանգության խորհրդում 2010թ. Իրանի դեմ նոր պատժամիջոցներ նախատեսող բանաձեւի քվեարկությունն էր, երբ չնայած ամերիկյան կողմի հորդորներին, Թուրքիան դեմ քվեարկեց բանաձեւի ընդունմանը՝ Բրազիլիայի հետ միասին Իրանի միջուկային խնդրի կարգավորման այլընտրանքային տարբերակ առաջարկելով: Այս ժամանակահատվածում Թուրքիան շարունակում էր տարածաշրջանում սեփական դիրքերի ամրապնդման եւ ամերիկյան «կրտսեր գործընկերոջ» իմիջից ազատվելու քաղաքականություն իրականացնել:

Թուրք – ամերիկյան հարաբերություններում բարելավում սկսեց նկատվել 2011թ. երկրորդ կեսից: Այս նոր միտման հիմնական պատճառը տարածաշրջանում տեղի ունեցող արմատական փոփոխություններն էին՝ հանձինս «արաբական գարնան» իրադարձությունների: Արաբական աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները հստակորեն ցույց տվեցին, որ Թուրքիան՝ որպես ինքնուրույն խաղացող, դեռեւս ի վիճակի չէ տարածաշրջանում իրադարձությունների ընթացքը փոխել սեփական նպատակների համաձայն: Այս խնդիրն առավել պարզորոշ էր Սիրիայում ընթացող իրադարձությունների համատեքստում, երբ չնայած վերջին տարիներին երկկողմ հարաբերություններում նկատվող ջերմացմանը՝ Սիրիայի իշխանությունները մերժեցին իրավիճակի կարգավորմանն ուղղված Թուրքիայի առաջարկները:

Սիրիայի շուրջ ընթացող իրադարձությունները բացահայտեցին նաեւ թուրք – իրանական խորքային հակասությունները, որոնց հիմքում ընկած է տարածաշրջանում գերիշխող դիրք ձեռք բերելու համար ընթացող պայքարը: Չնայած երկկողմ հարաբերությունների բարելավման վերաբերյալ բազմաթիվ հայտարարություններին, վերջին առնվազն կես տարվա ընթացքում թուրք – իրանական հարաբերություններում լարվածությունն աստիճանաբար ավելանում է, եւ դրա նշաններից մեկն էլ Իրանի միջուկային ծրագրի շուրջ բանակցությունների նոր փուլը Թուրքիայում անցկացնելու գաղափարին Իրանի իշխանությունների սառը արձագանքն էր: Պաշտոնական Թեհրանը միայն մեծ դժկամությամբ համաձայնեց ապրիլի 14-ի բանակցությունները Ստամբուլում անցկացնելու առաջարկի հետ:

Այս իրավիճակը թուրքական իշխանությունների համար ակնհայտ դարձրեց, որ Արեւմուտքի եւ, առաջին հերթին, ԱՄՆ-ի հետ հարաբերու-

թյունների բարելավումը կարելու նախապայման է տարածաշրջանում Թուրքիայի դիրքերի ամրապնդման համար: Ինքնուրույն քաղաքակա-
նություն իրականացնող եւ, միեւնույն ժամանակ, ԱՄՆ աջակցությունը
վայելող Թուրքիան շատ ավելի մեծ շանսեր ունի Մերձավոր Արեւելքում
ազդեցիկ պետություն դառնալու համար: Այս համատեքստում ռազմա-
վարական նշանակություն ունի Թուրքիայի որոշումը՝ անդամակցել
ԱՄՆ-ի կողմից իրականացվող հակահրթիռային պաշտպանության ծրագ-
րին եւ սեփական տարածքում դրա բաղկացուցիչ մաս հանդիսացող
ռադար տեղակայել: Ամերիկյան մի շարք վերլուծաբանների կարծիքով՝
հակահրթիռային պաշտպանությունը ՆԱՏՕ-ի համար 21-րդ դարում ունի
այն միավորիչ նշանակությունը, ինչը «Սառը պատերազմի» տարիներին
ունեւ խորհրդային վտանգը: Հակահրթիռային պաշտպանության համա-
կարգին անդամակցությունը երկարաժամկետ առումով ԱՄՆ-ի եւ ՆԱՏՕ-ի
հետ դաշնակցային հարաբերությունները պահպանելու քաղաքակա-
նության վկայությունն է:

ԱՄՆ իշխանությունների համար Թուրքիայի հետ հարաբերություն-
ների բարելավումն էական նշանակություն ունի Մերձավոր Արեւելքում
ամերիկյան քաղաքականության առաջնդման տեսանկյունից: Այս
համատեքստում կարելի է առանձնացնել մի շարք գործոններ:

Նախեւառաջ, ԱՄՆ-ի համար կարելու է իշխանափոխություններ
արձանագրած արաբական պետություններում արմատական իսլամա-
կան ուժերի դիրքերի ամրապնդման կանխումը: Այս համատեքստում
Արդարություն եւ զարգացում կուսակցության՝ չափավոր իսլամի եւ
արեւմտյան ժողովրդավարության հիմնական տարրերի զուգակցում
ենթադրող գաղափարախոսությունը լուրջ այլընտրանք է ծայրահեղա-
կան տարբեր մոտեցումների համար, եւ ամերիկյան կողմին ձեռնտու է
թուրքական մոդելի կիրառումը, մասնավորապես, այնպիսի պետություն-
ներում, ինչպիսիք են Եգիպտոսը եւ Թունիսը:

Թուրքիայի դերակատարությունը տարածաշրջանում ԱՄՆ-ի համար
կարելու է նաեւ Իրանի ազդեցության հետագա աճի կանխման
տեսանկյունից: Իրաքից ամերիկյան զորքերի դուրսբերումից հետո
պաշտոնական Վաշինգտոնի ազդեցությունը տարածաշրջանում որո-
շակիորեն նվազել է եւ հետագա թուլացման միտում ունի: Իր հերթին,
Իրանն աստիճանաբար ամրապնդում է դիրքերն Իրաքում՝ մեծացնելով
ազդեցությունը Նուրի Ալ-Մալիքիի կառավարության նկատմամբ:
Ստեղծված պայմաններում ԱՄՆ-ի համար ակնհայտ է, որ Թուրքիան
կարող է դառնալ Իրանի ազդեցությանը հակակշռող գործոն. ընդ որում՝
դա համապատասխանում է նաեւ Թուրքիայի շահերին, քանի որ

տարածաշրջանային առաջնորդ դառնալու պաշտոնական Անկարայի ձգտումն անխուսափելիորեն հանգեցնելու է թուրք-իրանական հարաբերություններում լարվածության աճին:

ԱՄՆ-ի համար կարեւոր է նաեւ Թուրքիայի մասնակցությունը հակահրթիռային պաշտպանության նոր ձեւավորվող համակարգին: Դա պայմանավորված է ինչպես զուտ ռազմական, այնպես էլ աշխարհաքաղաքական գործոններով: Ռազմական տեսանկյունից Թուրքիայում տեղակայված ռադարը հնարավորություն է տալիս ծածկել ինչպես ամբողջ Իրանի, այնպես էլ տարածաշրջանի մի շարք այլ պետությունների տարածքը: Միեւնույն ժամանակ, իսլամական պետության մասնակցությունն այս համակարգին ԱՄՆ-ին հնարավորություն է տալիս խուսափել վերջինիս՝ հիմնականում իսլամական պետությունների դեմ ուղղված լինելու որոշ մեղադրանքներից:

Միեւնույն ժամանակ, պաշտոնական Վաշինգտոնի համար ակնհայտ է, որ չնայած հարաբերություններում նկատվող բարելավման միտումներին՝ Թուրքիան հրաժեշտ է տվել «ԱՄՆ կրտսեր գործընկերոջ» կարգավիճակին եւ վերադարձը մինչեւ 2003թ. պահպանվող իրավիճակին քիչ հավանական է: Դա է պատճառը, որ Թուրքիայի հետ հարաբերությունների բարելավմանն ուղղված քայլերին զուգընթաց, ԱՄՆ-ը քայլեր է ձեռնարկում տարածաշրջանում Թուրքիայի նկատմամբ ազդեցության կոնկրետ լծակներ ձեռք բերելու եւ պահպանելու ուղղությամբ: Այս համատեքստում ԱՄՆ-ի համար կարեւոր է Իրաքի քրդական ինքնավարության հետ սերտ հարաբերությունների պահպանումը: Քրդական խնդիրը ներկայումս Թուրքիայի կենսական շահերին ուղղված թիվ մեկ սպառնալիքն է, եւ այս հարցում որոշակի լծակների առկայությունը կարեւոր նշանակություն ունի ԱՄՆ-ի համար:

Ամփոփելով՝ կարող ենք նշել, որ 2012թ. ընթացքում ԱՄՆ-ը կշարունակի Թուրքիայի հետ հարաբերությունների սերտացման քաղաքականությունը՝ փորձելով պաշտոնական Անկարայի հետ համադասված քայլեր իրականացնել տարածաշրջանում Իրանի ազդեցության սահմանափակման (որի բաղկացուցիչ մասն է Բաշար Ասադի վարչակազմի նկատմամբ ճնշումների ուժեղացումը), ինչպես նաեւ արաբական մի շարք պետություններում չափավոր իսլամականների դիրքերի ամրապնդման ուղղությամբ: Միեւնույն ժամանակ, ԱՄՆ-ը կշարունակի մի շարք խնդիրներում Թուրքիայի նկատմամբ ճնշումների կիրառումը՝ դրանով որոշակիորեն զսպելով նրա տարածաշրջանային հավակնությունները:

ՄԻԱԲԱՆԵԱՅ

Հազար հազար տարիներ, հրեական աւանդագիրքի – Աստուածաշունչի – Ծննդոցը, իբր աղօթագիրք գլխահակ կարդաց Հայ ժողովուրդը եւ ծնկաչոք չափեց անապատները, առանց գոնէ մէկ անգամ ստեղծելու իր Սովսէսը, որ ճեղքէր ծովը ու առաջնորդէր զայն, արձանագրելու համար հայկական «Ելից»-ը:

Հազար հազար տարիներ, Հայը կարդաց զայն բարձրաձայն ու աղօթեց բազկատարած, բայց չկրցաւ բաղդատութեան դնել Փարաւոններու նախճիրները Սուլթաններու արիւնատօներուն հետ, եւ եզրակացնել, թէ եթէ եգիպտական զարհուրանքները ծնան Սովսէսն ու Տասնաբանեան, ինչպէ՞ս թրքական արհաւիրքները չծնան մէկ Սովսէս, որ տար գոնէ միաբանեան:

Գուցէ թրքական զարհուրանքները այնքան ուժգին էին, որ հայ արգանդը մէկ սաղմ անգամ արգասաւորելու կարողութենէն զրկեցին: Գուցէ:

Եթէ սակայն, փաստն այդ է, վա՛յ այս ժողովուրդին, որ հինգած առաքինութիւններու փոխասացութեան ծիծաղելիութիւնն ունի իբր հոգեվարքային հծծիւն:

Բայց ես, որ կը հաւատամ, թէ անբնական է ու տիեզերական օրէնքի ժխտումը, որ մարդկային արիւնները չալեկոծին ու նահատակները աւելի «քան զաւազ ծովու» չիրաբխին անապատներէն, կը գրեմ նոր Ծննդոցը – միաբանեան Հայութեան:

Իմ խօսքս անոնց է, որ երիտասարդ են, երիտասարդ են հոգիով ու զերծ՝ զառամած ուղեղներու դատումներէն:

Անոնց, որ անապատներու աւազներով մկրտուեցան ու այսօր քաղաքներու ճահիճներուն դէմ իրենց գոյութեան պայքարը կը մղեն:

Անոնց, որ դիակներ համրելէն յոգնեցան եւ այսօր կը յամառին դիակնացումի դէմ իրենց սրտի բաբախիւնը պահել:

Անոնց, որ իրենց հարազատներու ոսկորներով կերակրուեցան ու ապրեցան եւ այսօր ճերմակ հացով կը թունաւորուին:

Անոնց, որ իրենց հօր դիակը անթաղ թողուցին, մօր հետքը կորսնցուցին անապատներու մէջ, քրոջ պատիւին ծախուիլը տեսան թրքական բազարներու մէջ, եղբօր խոշտանգուած դիակին վրայ կոխկռտելով փախան այսահար:

Անոնց, որ իրենց շէն տնակներու ակերակներու մոխիրներէն ճողպարեցան եւ իրենց վերքերէն թորող արիւններով իրենց պապակը յագեցուցին:

Անոնց, որ որբի եւ գաղթականի թոյնը ցմրուր խմեցին, հորիզոնէ հորիզոն:

Եւ վերջապէս անոնց, որ այսօր, ամէն օր մահին դէմ կը պայքարին ու ամէն գիշեր սրբազնագոյն միակ աղօթք՝ իրենց քալած ճամբային զարհուրանքովը կը մտնեն խշտեակի մը կեղտերուն մէջ:

Խօսքս անոնց է, որոնց մէջ կը տեսնեմ անծանօթ Մովսէսը հայ տառապանքին եւ հայ Իսրայէլը, որ գիտէ անապատներէն անցնիլ ու ծովերը ճեղքել դէպի Աւետեաց երկիր երթալու ուխտով:

Մէկ է վրէժը եւ Յայն անոր առաքեալն է:

Վրէժէն զատ աստուած չպաշտես:

Շահան Նաթալի
«Թուրքերը եւ մենք»,
Աթենք, 1931թ.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Գարեգին Նժդեհ	
Ե՛Վ ՋՈՂ, Ե՛Վ ՋՈՂԱՐԱՐ	
<i>Հայը եւ թուրքը</i>	1
Հայկ Ասատրյան	
ՀԱՅԿԱԿԱՆ ԵՂԵՌՆԻ ԲՈՒՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ	
<i>Մոնղոլական եղեռնաբաղձություն</i>	4
Մուշեղ Լալայան	
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԿԱՆԴԱԿԸ	
ՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔՆ Է	11
Ռուբեն Մելքոնյան	
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐԸ	
ԵՎ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ	
ԱՐԴԻ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ	15
Գագիկ Տեր-Հարությունյան	
ԹՈՒՐՔԱԿԱՆ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՍՊԱՌՆԱԼԻՔԸ	20
Սեւակ Սարուխանյան	
ԷՆԵՐԳԵՏԻԿ ՊԱՏԵՐԱԶՄ ԹՈՒՐՔԻԱՅԻ ԵՎ	
ԻՍՐԱՅԵԼ – ԿԻՊՐՈՍ ՁԵՎԱԿՈՐԿՈՂ ԱՌԱՆՑՔԻ ՄԻՋԵՎ	24
Հայկ Գաբրիելյան	
ԹՈՒՐՔԻԱՆ ԸՆԴԴԵՄ ՄԻՐԻԱՅԻ	30
Բենիամին Պողոսյան	
ԱՄՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ	
ԹՈՒՐՔԻԱՅԻ ՆԿԱՏՄԱՄԲ 2012-ԻՆ	35
Շահան Նաթալի	
ՄԻԱԲԱՆԵԱՅ	39

*Շապիկին պատկերված է
Ավնիկ բերդը (Վերին Բասեն)*

«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ», Հայաստանի
Հանրապետական կուսակցության հրատարակություն
Խմբագրական խորհուրդ
Երեւան, 375010, Մելիք-Ադամյան 2: Հեռ. 58 04 91, 58 04 83:
Էլ. փոստ՝ hanrapetakan@hhk.am:
Հիմնադիր՝ Հայաստանի Հանրապետական կուսակցություն:

Թուղթը՝ օֆսեթ, ֆորմատը՝ 70×108 1/16:
Պայմանական 3,5 մամուլ: Տպաքանակը՝ 1000:
Տառատեսակները՝ «Arial Armenian», «Hay Helv»
եւ «VS Helvetica»:
Վկայական՝ ՕՄՍ 000176:
Տպագրվել է «Ամարաս» տպարանում: